



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16433

Ch. Ch. P. L. G. L. E. Z.
P. L. M. W. Y. 17. M. Y. / 10
1902.

1891.99

Lh-13

891.99 „Հայքի բանակի պահպանության
գործադրությունների համար”
X-13 800 11-ԱԲ ՄՐ. 22

13 MAY 2005

19 NOV 2010

ԹԱՅՈՒԱՏ ԳԱԽԻՔ

891.99
X-13

11-ԱԲ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՊ



1001
155



Արտաստպուած Ազգագրական Հանդիսից



ԹԱՅՈՒԱՏ
Տաղարան Կ. Մարտիրոսյանցի
1902

- .01. 2013

2005 ՏԱՐ. Ը Ռ

008
ՀԽ-11

Ա Պ Ա Մ Գ Հ Ա Յ Ա Լ Վ

ԲԻՆ ԺՈՒՐԴԵՐՈՒՄ

Дозволено цензурою, Тифлесъ, 25 Июля 1902 г.

2435-91
(2435-91)

8091

Դ Տ է ր հ ա ն գ ու ց ե ա լ

Տ. Տ. ԳԵՂՋԻ Դ.

ՄԵԾԱԳՈՐԾ ՀԱՅՐԱՊԵՏԻ

ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Երախտագիտական անհուն զգացմամբ

ՆՈՒԻՐՈՒՄ Է

ԳԵՐԳԵԱՆ ՇԵՄԱՐԱՆԻ ՍԱՆ՝

ՆՈՒԱՍՏ ԳՐԻ ԱՌԱՋՀ.

ԹԱՂԱՄՏ-ԴԵՒՐԻ



առնանք գողորմին տը տան։ Սանասարին,
«Զըմէն¹⁾։ Օղորմին տը տան։ Բաղդասարին։
«Դառնանք գողորմին տը տան։ Էն Մենծ-Մհերին։
«Զըմէն։ Օղորմին տը տան։ Ջէնէօվ-Յէօվանին։
«Դառնանք գողորմին տը տան։ Էն Թօլուան-Դաւթին։
«Զըմէն։ Օղորմին տը տան։ Պրզախկ-Մհերին։
«Դառնանք գողորմին տը տան։ Քեառասուն ճէօղ Դեղձուն-Ծամին²⁾։
«Զըմէն։ Օղորմին տը տան։ Խանովիթ-Խաթունին։
«Դառնանք գողորմին տը տան։ Ճարպախար-Քամին։
«Զըմէն։ Օղորմին տը տան։ Բաթմանայ-Բէ-ղին։
«Դառնանք գողորմին տը տան։ Ջիրին-Անախուն-Գի-հարին^{3)*}։
Ճղէճէօղ էկանք վոր Մհերի ճէօղին։

^{*)} Ա.ազարք, սոյն վարիանտի պատմողը, Մոկաց երկրի Ասինջ գիւղն է, Յովակիսենց Վանուկի որդին, ՅՈ տարեկան ծերունի է նա, բաց թեր թարմութիւնը պարած, ինքը Կարճահասակ է, նիհար գէմքով։ Ղազարն այս նազլը⁴⁾ սովորել է իւր համագլւզացի Վօղսս անունով մէկից, Ղազարի ասելով այդ Պօղոսը գիտեր այս նազլի էւթէ ճիւղն էլ, աչն ևս՝ լաւ։ Ղազարը մօս 15 տարի աւած եղել է Բաշ-կալայում, մոտ տարի ժամանակով, Եօթ⁽⁷⁾ տարի է աշա, որ եկել է նա Կովկաս, իւր պանդխառովին եան ժամանակն անց է կացնում նա ս. Խջմիածնում (ուր և գրի ենք առել սոյն վարիանց 1899, տոնիսին), և շրջակաբռում, ամառ հունձ է անում, աշնանը իւր բազգակիցների հետ գնում է քրդարնակ վայրեր ունչուն՝ չէլուն (թաղիք գործելու), իսկ ձմեռը գիւղօրացրում բամբակ գգերով է պարապում։ Ճազարը գիտէ նաև շու գրձեւ և սր հայրենիքում պարապել է երկրագործութեամբ⁵⁾ գործ դնելով նաև իւր արհեստները։

Ինչ վերաբերում է գրութեանս ձեկին՝ տեղ-տեղ գրել ենք ոտանաւորի ձեռվ, տեղ-տեղ՝ արձակ, առաջին ձեռվ են երկերը և այն հատուածները, որոնց իւրաքանչիւր տողում լրանում է մի միտք և զգալի է չափը (մեծավերջ-յամնէ և վերջատանջ-ահապետъ)։ գործ ենք ածել հետեւեալ պայմանական տառերը. է-Փր. ս, օր. էրի-ն, չ-վափուկ ք. չ-վափուկ կ. է-վափուկ գ. ա-կիսակողդային ա. ՚ի-յի. օր. ՚ի. է-կոկորդային ի (մօտ. ս) և. ՚ի. Ա.

¹⁾ Ամէն։ ²⁾ Քառասուն ճիւղ ծամ ունեցող։

^{3)*} Սոյն վարիանտի պատմողն այս ողորմին երգում էր։

Ա.

Սասում կէր¹⁾) Մհեր. Մըսըր կէր Մելիք. Մսրամելիք սատկաւ²⁾), Կնիկ թուղթ ճամպիսեց Սասնայ Մհերին,— Մհեր Սասնայ թագաւոր էր. Ասաց. «Կեսս կէօխ իմ խետ մէկ էնիս, ³⁾: Մհերն էլ կնկեան ասաց. «Կնիկ, էլի շուրիս լըաց, իմ թըլդարիքն տեհի, էրթամ Մելքի կնիկն առնիմ: Էսաց. ⁴⁾ «Տէ-ընչի կերթաս. էն տաճիկ ի, տէ-խայ—քրիստոնայ խը-ընչի կերթաս էնու խետ կէօխ մէկ էնիս»: Մհեր ասայ. «խուղ⁵⁾ էն մարդու կէօխ էնի, ինչ կնիկ տայ, մարդ-չառնի, իս տի էրթամ»: Կնիկն ասաց. «Մըհեր, տէ-որ էրթաս քրիտուն խառնուխ» չուր⁶⁾ քառուն տարի իմ տուն չես ի կեայ: Մհեր ձին խեծաւ չ'սաց Մըսըր, Մելքի կնիկ առից: Ին ամիս, ին օր, ին սհաթ, ին դանիլ⁷⁾ դայ⁸⁾ որ լըմըցաւ՝ Աստուած. մէ տղայ տուից, անուն դրին Մելիք: Եշարքը տղէ՛ տարը⁹⁾ կը մեծանըն, էնիկ օրը կ'մեծանըն: Որ տարին լըմըցաւ, կ'նաց էրեխացտերու—մէջ ճան¹⁰⁾ կ'խաղէր: Որ էրկու տարի յանց կացաւ՝ Մելիք էլաւ կնաց ավ—դուշ¹¹⁾, կնաց ավ—դուշ¹²⁾ վէրու¹³⁾ մարալ¹⁴⁾ զարկեց, դրից իրա թէկի փրայ, եկաւ տուն: Մհեր տեհաւ, էսաց, «Փայ, ինչ էրի, խայու ճրագ խանքըցի, տաճկու. ճրագ վառի»: էլաւ սուս-փուս Մսրայ տէ-ս¹⁴⁾ էլաւ էկաւ Սասուն^{*}): Մուշտուլուղ¹⁵⁾ տարան Մհերի կնկան. կնիկ էլաւ տէւու¹⁶⁾ փակից: Մհեր կանչից էսաց, «Տիւռ պաց», Էսաց. «Էրթում կերի, չուր քառուն տարի տէւ իմ շէնլըգին չես ի կեայ»: Ասաց. «Կընիկ, հայու ճրագ հանքըցիր ինք, տաճկու ճրագ վառիր ինք, Ասաց. պէ գիշիր մէ օր հաշուխնք, ցերեկն էլ մէ օր հաշուխնք, շա-

¹⁾ Կար: ²⁾ Վոխանակ ժեռաւ. այս բառն են գործածում մեր մէջ ցարդ բոլոր ոչ-քրիստոնեաների համար: ³⁾ Միասին պառկենք: ⁴⁾ Պատմուածքի ընթացքում խառը գործ են ածում թէ էսաց և թէ սասաց ձմերը: ⁵⁾ Հողը: ⁶⁾ Մինչև: ⁷⁾ բագէ: ⁸⁾ Միջոց, ժամանակ: ⁹⁾ Տարով: ¹⁰⁾ Վէգ: ¹¹⁾ Որսի: ¹²⁾ Վայրենի: ¹³⁾ Եղջերու: ¹⁴⁾ Պուրս: ¹⁵⁾ Աչքալուսէնք: ¹⁶⁾ Պուռը:

^{*}) Թէ Սասուն և թէ Սասուն անխտիր գործածական են այս վարիանտի մէջ:

քաթն էլ ամիս հաշուխնք, ամիսն էլ տարին հաշուխնք, —քառուն տարի կ'լըմընայ, քառուն էլ աւելի կ'մնայ» (գէ-վայ մէ էրթում չի մնայ): Կնիկ տէ-ու բաց էրաց, էսաց. «Տղամարդ որ կայ կէօխ ի, կնիկ որ կայ ոտ ի, չի կարայ տէ-ու պունի մարդու կերաց, տէ-ու կ'պանամ կը կեաս տուն, Ասուած մեզի մէկ տղայ կը տաց, ամայ մինչ կ'մեռ: Նինք, տղէն անտէր կ'մնայ խըսըրը¹⁾ վերայց: Ասաց, «Ասուած մէկ տղայ տաց, էրթայ Մելքի եալսէն²⁾ պոնի, խայու ճրագ չը խանգի. Ասու պախած դու գէլ չի ուտի»: Ին ամիս, ին օր, ին սհաթ, ին դանիլ դայ որ լըմընցաւ՝ Ասուած տուից մէ տղայ էլաւ, տարան կնքին, անուն դրին Դաւթէ: Որ տղէն պերին տուն՝ Մհերն էլ, կնիկն էլ խիւանդ ընդան: Մհեր Ձէնէօվ-Յէօվանին էսաց. «Կ'տանիս Մըսըր Մելքի կնիկ Դաւթին կ'պախից: Էրկուսին վախանք էկաւ, էրկուսն էլ մեռան: Բ.

Ճարպախար-Քամին, Բաթմանայ-Բէ-ղէն մասնակին անուն մեռան Մհերի փաշլիւանքտիրն են. Ձէնէօվ-Յէօվան Դաւթին տուից Բաթմանայ-Բէ-ղի շլակ, Ճարպախար-Քամուն, տարան Մըսըր. Տարան Մսրամելքի կնկանը կուշտ, որ պախի Դաւթին: Էն ծիծ կ'տայ, չի բռնի. Մելիքն էլ կնացիր էր ավ-դուշ, ավ-դուշից էկաւ, ասաց. «Էս ինչ տղայ քէօ գիրկն առիր ես», Ասաց. «Որդի, քէօ ախսէրն ի, էկրդ, իրան կնիկ Սասուն մեռան ի, էդ էլ քէօ ախսէրն ի, ճամպիսան ի պախին: Ես ծիծ կ'տամ, չի ուտի», Ասաց. «Քէօ տունը աւերի. Էնօ խօր չունի մեղր ու կարագ. ճամպիսի պիրեն մէկ տիկ մեղր, մէկ տիկ կարագ, ուտի մեծանայ», Ճամպիսեց պիրեց, տուից Դաւթիթ պախից: Աշլըրքի էրեխէք տարէ կ'մեծանին, Դաւթիթ օրէ կ'մեծանէր. Ճարպախար-Քամին, Բաթմանայ-Բէ-ղէն մնային Մըսըր՝ Մելքի կուշտ. Մելքին էլ չորս-խինդ տարեկան որ էլաւ, էլաւ խօր տեղ նատա. Իրան զօշուն կառնէր կէրթէր տաշտ հէօլ³⁾ խաղ կէնէր. Էնու հէօլն էլ իրեք խարիր վայցուն վեց լիտր դամուր⁴⁾ էր.

¹⁾ Փախաթ: ²⁾ օձիք: ³⁾ Հոլ խաղալ, —փախտով խփում են մի փախտագնդի և հեռացնում: ⁴⁾ Էրկաթ:

Դաւիթ մէ օր Մելքի մօրն էսաց. «Մելքին ասես ընձի տանի իր խետ հէօլ խաղ էնինք»,
Յըրկուն օր Մելքն էկաւ՝ մէրն էսաց. «Եռատուն ախպէրդ խետդ տար հէօլ խաղ էնի սորվի».
Մելքն էսաց. «Էնիկ Մհերի տղէն ի, վայ թը կոյ ըտեղ՝ վնաս տաշին».
Մէր խետ կրուաւ, ասաց. «Տար»:
Տարաւ սարի կէօլս տրից,
Զինք դօշուն առից չնաց տաշտ հէօլ խաղ կէնէր.
Էրկու ֆէրրզ¹⁾ էլ տրից Դաւիթը պախեցող.
Դաւիթ ինադ էկաւ,
Էն էրկու ֆէրրզ քաշից պերից տուն.
Մելքի մէրն էսաց.
«Դաւիթ, ընձի շուտ էկար»:
Էսաց. «Վալլահ, ընձի դրիլ էր գէօտըկ կէօլս, զինք դնացիր էր տաշտ հէօլ խաղ կէնէր, պան մ չին տեսիր»:
Յըրկուն Մելք օր էկաւ՝ Մելքի խետ կրոււ էրաւ, ասաց. «Ախպէրդ տար կըշափէ խետ վէ դիր, էն էլ հէօլ խաղ էնայ սովորի»:
Մելք առաւօտը գԴաւիթ էւր խետ տարաւ:
Որ չնաց հէօլ խաղ էրին,
Ճաշին նօբաժն էկաւ Մելքին.
Որ նորաթն էկաւ Մելքին.
Դաւիթ չնաց մտաւ փուսի մէջ:
Որ հէօլ կէրթէր կինէր փուսի մէջ,
Էն դօշում բիրադի էկան,
Զկարացան գԴաւիթ էն փուսից խանին:
Մելքն էլ էսաց. «Տղերք, սազ էրէք²⁾»,
Էս հէօլ կթալիմ, թըլ էրթաչ Դաւիթ ըսպանի,
Տէ՛ ընձի դընամիշ չէնէք³⁾,
Չասէ՛ թէ Մելք զարկից էւր ախպէր սպանից,
Տէ՛ք աչքով կը տեսնէք:
Սագեր զարկին, Մելք գհէօլ թալեց,
Հէօլ չնաց էնինէր Դաւիթի կըլսէւ վերաց:
Զեռ տուից յառջիւ հէօլ բոնեց.
Որ հէօլ բոնեյ խալցըցուց՝
Թալեց դօշունի մէջ,
Հարիր մարդ սպանեց, երկու խարիր էլ եարալամիշ⁴⁾ էրաց:
Զինք թողեց փախաւ էկաւ տուն:
Մսրամելքն էլ, — չանք իրկըւան խաղ էրին—

¹⁾ Փահէւան; ²⁾ Սազ ածէք; ³⁾ Զդատասպարտէք; ⁴⁾ Վիրաւորեց,

Յըրկուն էրկու սըհաթ չմին¹⁾:
Ճուտ փայդաստ էրաւ²⁾ էկաւ տուն:
Էկաւ տեսաւ օ Դաւիթ
Ընկի ժեռուտ տակ չնիր ի:
Անեղան լար յարձըկից,
Պիրեց Դաւիթի բէօղազ³⁾ խեղդէր,
Մէր գոնէն էկաւ, էսաց. «Մելիս, ինչ կէնիս»:
Էսաց. «Դաւիթ պիտի խեղդեմ,
Խարիր մարդ ընձի սպանիր ի:
Էսաց. «Մելիք, թէ տե Դաւիթին պան ասիս»:
Էմ Տրծը կաթ քէօ վերաց խարամ էլնի:
Ճամպիսի թու էրթաց իրա խօր էրկիր,
Ընը գոռնարած, ընը նախըրքի,
Իրան կէօլս պալմի:

— Էսաց. «Զինի, պըտի սպանեմ»:
Կատուածամէր մարդ կար,
Էկան ինչան օրթալըզ:
Զթողըն օր ըսպանէր:
Էսաց. «Վիրէ՛ մէ չսայց⁴⁾ կըրակ գրէք, մէկ օսկի գրէք, Դաւիթ
կանչէք թող չնց, թէ որ կրակ վերցուց՝ էրեխայ ի, թէ որ օսկի
վերցուց՝ կսպանեմ»:
Կանչին, Դաւիթն էկաւ, ասին. Դաւիթ, էս էրկու քասից վար մէկ քի-
սիրա կուզի՝ վէ կալ քեզի խամար»:
Դաւիթ ձեռ տարաւ դէբաց օսկուն:
Հրեշտակնիր Դաւիթի ձեռ բռնին, տարան կրակի վերաց: Զեռ էրուաւ
որ մատ պիտ տէր լեզուն՝ կրակ էկաւ առեց լեզուն, լեզուն էրուաւ,
անուն դրին թաշուած. Դաւիթ:

—

Ք.

Էսաց. Որ էցկուն⁵⁾ ի, ճամպիսէք թըլ էրթաց ուր խօր էրկիր:
Պիրեց Բաթմանայ-Բէղէն, Ճարապիսար-Քամին դրեց Դաւիթի խետ,
Էսաց. «Տղէք Բաթմանայ կարմնջի վերէն մորթէք, մէկ բէ-թիկաց
էրէն պիրէչ, իս խըմիմ, իմ սիրտ խովանաց»:
ԶԴաւիթ վերցին չնացին:
Խինէ օր, վեց օր ճամխայ⁶⁾ չնացին, մէկ օր չասին «Դաւիթ, դուն
անօթի ես, ան⁷⁾ ճարաւ ես»: Դաւիթն էլ իրան քէֆի խետ կէր-

¹⁾ Երկու ժամուաչ չափ; ²⁾ Արձակեց, ազատութիւն տուաւ;

³⁾ Կոկորդ; ⁴⁾ Սման; ⁵⁾ Ալդաս; ⁶⁾ Ճանապարհ; ⁷⁾ կամ,

թէր: Կնոցան Բաթմանայ կարմնջի մօտ կացնան, Դաւթին կանչին:
 «Դաւկիթ, Դաւկիթ, շուտ արի էրթանք»:
 Դաւկիթ չնոց խասաւ. ասաց. «Տօ զըրըշմալքեր՝¹⁾, Եսա լինետ օր կայ, վեց օր կայ մենք ճամբախ կու չոնք, տեւ մէկ օր չափ Դաւկիթ անօթի ես, ան ծարաւ ես. Եդ կարմնջի վերայ կացնիր է՛, ընջի չէ՛ էրթայ:
 Ասաց. «Դաւկիթ տեւ խօր երկրէն մօտացիր ենք, մուշտուլուղ տանք
 Զէնէօփ-Յէօփանին, մէկ պահ տայ մուշտուլուղ»:
 Մէկն լիտ մնաց, մէկն ընդաւ Դաւթի յառեց: Կնոցին կարմնջի օրթալը՝²⁾:
 Մէկ էն եանէն, մէկ էն եանէն դարձան: Դաւկիթ դնին կարմունջի վերայ մորթին: Դաւկիթն էլ Ասու անուն տուից, մէկ ձեռ զարկ էնու եախէն, մէկ էնոր, պիրից դրից մէ մէկու վերայ:
 Էսաց. «Դաւկիթ, տեւ քեօ Ասուած, անի օր քէօ խէր սաղ էր՝ մենք քէօ ֆէրզգ-փահլիւանքտիրն ինք, որ քէօ խէր մեռաւ՝ չնոցինք Պսրամելքին կուլուղ էրինք՝³⁾. Հիմի որ Ասուած էդ շնորհք տվի քեզի, մենք կուլուղ կէնինք, էլ չենք էրթայ Ծելքին կուլուղ էնին: Թողից: Էլան չնոցին Սասնայ աղքին մօտացան: Մէկրն մուշտուլուղ տարաւ Զէնէօփ-Յէօփանին, ասաց. «Մուշտուլուղ տու, Դաւկիթն էկաւ»:
 Ասաց. «Էկաւ՝ բարով էկաւ, մէկ գեղին լիրայ մուշտուլուղ տուից. ասաց, Դաւկիթ էնինք ուլարած. աղքին էլուր տանի պախի: Զէնէօփ-Յէօփանին էլ մէ պողվոտէ սոլ կարել տուից Դաւթի խամար: Դաւկիթ էլերն առից չնոց Թոլայ՝⁴⁾ տաշտ: Դաւկիթ միտք էրաւ, էսաց, «Քանըն, էդունց հախ քիչ կունը, օր մէ կօխ պախենք: Մէ զալամի՝¹⁾ ծառից աղչից, առից իրան ձեռ: Ինդաւ, էդ սարի, էդ աղնդակի լը՝ պըստրակտիր՝²⁾ բիրադի ժողից պիրից: Պիրից տաշտը լիւ էրաւ: Պողվոտէ սոլեր կտրտվան: Խրօնապէր ճաշին խաց պիրից Դաւթի խամար. տեսաւ օր սոլեր կտրտվիր ի, ասաց. «Դաւկիթ, գլխուղ մեռնիմ, օրէ մէկ սոլ կարել տամ՝ քէօ հախ էնդադայ՝³⁾ չի խանի, էլ մեր օգուտն ինչ տրլնի»:
 Ասաց. «Խրօնապէր, էդ սիւ ուլիր Ասուած իրան պէրնով օրհնի, ամա էդ սրւտակ, բօք ուլիր Ասուած էնոնց անիջի, ասաց. Խրօնապէր,
 մէ ուլ մտիրի աղի տակ. իզին՝⁵⁾ կտան օր սպանիմ»:
 Խրօնապէր իշլեց, ըլըպստրակ էր աղի տակ, իրա լեզուն խանիր էր ըլըպստրակ, ասաց. «Դաւկիթ, քեւ զըլսուն զուրբան էլնիմ, էնու

¹⁾ Կայնուանք է: ²⁾ Մէջ տեղը. ³⁾ Ճառակեցինք:
⁴⁾ Թոլայ գաշտ-անշուշտ նոյն Լոռաց կաս էւռայ դաշտն է, որ
 պատահում է միւս վարիանտներում:
⁵⁾ Բարդի, ²⁾ Նապաստակներ. ³⁾ այնքան, ⁴⁾ սկ, ⁵⁾ իրաւունք:

Փէտ ըմ զարկից, ըլըպստրակ էրկու կտոր էլաւ, մէկ կտորը զըբայ արևելք չնոց, մէկ դըբայ արև մուտք: Ձէնէով—Յէօփանն էկաւ տուն: Էկաւ տուն, էսաց. «Բօշ ի՝», Դաւկիթ ուլ ըլըպստրակ մէ մէկից չի կարայ ճկկը, էնին: Նախրչի: Առաւտուն թողին նախրի տարաւ Թոլայ տաշտ, էլի միտք էրաւ, էսաց.— Զանըմ, էդ նախրի հախ ինչ դադար տ' չոյց, օր մենք ուտենք կառավարուենք: Մէ զըլամի աւեց իրան ձեռ: Ինչաւ սարեր, անդակեր ասլան մէկ եանից պիրից, զափան մէկ եանից պիրից, առօծ մէկ եանից պիրից, շէր մէկ եանից պիրից, պիլընդ՝²⁾ մէկ եանից պիրից, գէլ մէկ եանից պիրից, արջ մէկ եանից պիրից. ամենայ ջէ-ջանաւար ժողվից տաշտը լիք էրաւ:
 Խրօնապէր ճաշէն խաց տարաւ. չնոց էլաւ գէօդըկի կէօխի, իրիշկեց Թոլայ տաշտ. Դաւկիթ էնքամ ջանաւար ի ժողին՝ օր Տէր փրկի, Ձէն նօփ-Յէօփան վախեցաւ, կանչից Դաւթին, ասաց. «Դաւկիթ, Դաւկիթ, Խրօնապէր մեռնի քեզի. Տերացիր եմ, չեմ կարայ հաց, արի քեւ խաց տար»:
 Ասաց. ճշմարիտ, Խրօնապէրս վախացաւ. Էկաւ իրա խաց տարաւ Դաւկիթ: Ձէնէօփ-Յէօփան լիտ դարձաւ էկաւ տուն. աղքին մէջ կանչիլ տվից, ասաց, «Ճի՝³⁾ դռնիր վակէք, ամեն դռան՝ լիտիւ մէջ ջուկստ գերան շէքք. Դաւկիթ էնքամ ջանաւար ի ժողվի, օր էկաւ աղքին մէջ՝ մէրն էլ, տղէն էլ տուտին: Բերին դռնիր շինին:
 Դաւկիթն էն օր, հայց ճաշ էր, նախրի պիրից, պիրից լըրեց աղքին մէջ, կանչեց էսաց. «Տղէրք, վեր էլէք, վեր էլէք. վեր մէկին օր մալ չունի, իրան խամար մալ պոնի, վեր մէկին օր տաս ի, քսան տանի:
 վեր մէկին օր քսան ի, քսուուն տանի:
 Մէկ մարդ տիւ-ւ չիբաց, չլաւ. Դաւկիթն էլ խաթր մնաց, ասաց. «Էխար րամ, էնացէք, հալալ մնացէք»: Էն սարու ջանաւարքեր իզին տվից, չնոցին: նուրէն հարաւամ՝⁴⁾ էկաւ իրան մալ պոնից տարաւ տուն:
 Ձէնէօփ-Յէօփան ասաց. «Բօշ ի, Դաւկիթ չի կարայ նախրըութին էնի, մէկ շոր-խինդ ջահէլ տղայ դնինք խետ, էրթայ տաշտի մէջ լիւ՝⁵⁾ սպանի:
 Կնոցին տաշտի մէջ, ինկան պավուու կուրկի մէջ. Պառաւն էլ խաց թիսից, էլաւ հայ կուրկի տեսնէր: Տեսաւ օր Դաւկիթ տղէք առիր ընդիր կուրկի մէջ. խսաւ պառաւ.
 Մէ իւմրուղ՝⁶⁾ տիլից Դաւթի գլխուղ վերաց, ասաց. «Կրէօղ՝⁷⁾ քեզի տանէր Թաւկիթ, տեւ ոչ պարով քեւ մօրէն ճնվէր. քիւ խօր չունի ավ—ղուշի տեղ, օր պառվի կուրկի մէջ ավ—ղուշ կէնիս.

¹⁾ Պատարկ բան է. ²⁾ զագր.

³⁾ Ճեր:

⁴⁾ Խրաքանչիւր մէկիր. ⁵⁾ Լորի. ⁶⁾ Բառնցիք. ⁷⁾ Գրող:

Ասաց. «Պառաւ, իմ խօր ավ-դուշի տեղ վար տեղն ի».

Ասաց. «Քի-խօր ավ-դուշի տեղ՝ Ծովագորն ի, որ քէօ խէր մեռիր ի, Մըս բամելիք լիտ ի կտրի¹⁾»:

Դաւիթն էլ էլաւ դարձաւ էկաւ տուն, ասաց. «Տղէրք, պատրաստ մնացէք, առաւուտ էրժանք Ծովասար ավ-դուշ»:

Տղէրքն էլ պատրաստութիւն տեհան, առաւուտուն հնացան Ծովասար ավ-դուշ. Ձէնէօվ—Յէօվանն էլ խետ հնաց.

Կնացին. Էնու խէր պատ էր քաշէր սարու չորս կողը. Սարու օջսար օ եկեր էր թափէր մէջ, էլ չէր կարցի տիւս էլնը. Դունիր պացին, մտան ներս. Հարքաս խասաւ, իրան խամար կ'սպանէր. Դաւիթ կանչից էսաց. «Է՛, իզին չկայ օր մէկն էլ սպանէ՛. էդ իմ խէրն տիւսաղ էրի²⁾ կը բրախիմ³⁾ էրժան սար. խօշախ է՛ հնացէ՛ս սար սպանէ՛»:

Բրախից հնացան սար.

Ով, ինչ կօչախ էր, հնաց իրան ավ-դուշ էրաց, ովկինչ թամբալ էր, լիտ մնաց. լիտ դարձան էկան մնացին Ծովասար. Միս էփին կերան. Քնելու ժամանակ Դաւիթի չուխու փէշ Ձէնէօվ-Յէօվան դրից դլխտակ, հնաւ, ասաց. «Դաւիթ էրէխաց ի, չփախնաց ընի մէկ եան էրժաչ».

Մնաց. կէս քիշերփան ի. Դաւիթն էլ օխտ տարեկան ի. քէւն չը տանիթից սարի մէշի⁴⁾ մէջ մէ կրակ մ' կը վաւուէր. Էլաւ տէրժէր դըրաչ կրակին տեհնամ ինչ մարդիկ են ավ-դուշ կենեն: Վարպէր էլաւ, տեսաւ օր չուխու փէշ խրօխպէր դրիր էր վերաչ ընիր էր, ասաց. «Թի որ վէ խանեմ⁵⁾ տ'ասի Դաւիթ վախեցաւ. թէ որ չ'խանեմ, չուխու փէշ էնու գլխու տակն ի: Զախուն⁶⁾ թալէց, էնու չուխու փէշ կտրից:

Էլաւ հնաց դըրաչ էն կրակին: Կնաց էնտեղ տեսաւ, օր վանս Մարտին, ի. մարմար քար պացիր ի, լիւս կամար վերէն կանգնիր ի, վանքի խիմ⁷⁾ պացիր ի. Իրեւ անգամ զիւս համբուրից, դարձաւ էկաւ: Էլաւ, հոլաչ խրօխպէր չնած էր. ասաց.

«Խրօխպէր վիր էլի,

«Ենէր չունեմ, արա խէրութիւն,

«Մէր չունեմ, արա մէրութիւն,

«Օրհնեալ-բարերար Աստուած,

«Խնամքն է շատ Աստըծուն»⁸⁾.

Խրօխպէր վիր էլաւ, ասաց. «Ծուռ Դաւիթ, էլ ինչ էրիր»:

«Խրօխպէր, Օրհնեալ բարերար Աստուած,
Խնամքն է շատ Աստըծուն.

¹⁾ Խլել է. ²⁾ Բանտարկել. ³⁾ Ազատ կը թողնեմ.

⁴⁾ Անտառ. ⁵⁾ Զարթեցնեմ. ⁶⁾ Դանակ. ⁷⁾ Հիմքը. ⁸⁾ Երկ է.

Գնացիր ի վանքն Մարութավի,

Մարմար քար բացվիր ի,

Լէս կամար վերէն կանգնիր ի,

Երեք անգամ խամբուրիր իմ,

Վանքի խիմ պացիր իմ:

Էլի, էսաց, էսօր ուրբաթ ի, Էնքան Փալայ կուզիմ, Էնքան ուստաչ կուզիմ, էս օր ուրբաթ ի, ձեռ ձգենք վանք շինենք,—

Օրբաթ օր ձեռ ձգենք շինելու.

Ջաբաթ օր կէօլս պիրենս վանք, զանգեր կախենք,

Մէ պատարագ մէջ էնենք, օրէնք առնենք,

Էրթանք մէջ տեղ նստենք»:

Էնքան Փալայ-ուստաչ պիրեց,

Օրբաթ օր ձեռ քիլին վանքնելու,

Ջաբաթ օր կէօլս էկաւ, զանգիր կախին,

Կէրակի օր քաւսուն վարդապետ դրից վանքի մէջ,

Քաւսուն էլ տէրտէր դրից վանքի մէջ,

Քաւսուն էլ տիրացու դրից վանքի մէջ:

Պատարագ մատուցին. իրանց օրէնքն առին.

Բաթմանայ-Քիւղէն, Ճարպախար-Քամին—

—Օրէն մէկ տիկ մեղր, մէ՛ կարագ.

Էն էրկօ խօրագն էր.—

Դրին վանքի պախեցող:

Թողին հնացին է-բանց տուն:

Պ.

Օխտ տարի կէր՝ Մսրամելիք Սասնաչ խարջ կառնէր

(Էկան երանց տուն նստան):

Խաբար հնաց Մելիք խամար, ասաց.

«Դաւիթ ելիր ի կնացիր Ծովասար ավ-դուշի.

Վանս Մարութավի շիներ ի,

Քաւսուն վարդապետ դրիրի մէջ,

Քաւսուն տէրտէր դրիրի մէջ,

Քաւսուն տիրացու դրերի մէջ,

Բաթմանայ-Քիւղէն, Ճարպախար Քամին

Դրիր ի վանքի պախեցող»:

Մելիքն ասաց. «Վանս Մէկբինն ի,

Մինչ ճամփենք մեր խարջն առնենք»:

Տաս խատ եասավուլ ճամփեց,

Էկան Սասուն օր խարջ տանին.

Սասնաց լսորջն էլ ի՞նչ ի—
Քառուրա՛ Ն ճշմար ո դժուածք
Քառուուն կուս-աղջիկ արմաղան,
Քառուուն կուտ կնիկ էլ՝ օր երկանք աղան.
Քառուուն երկան կնիկ էլ՝ օր ուղտ բառնան.
Քառուուն բուղջիկ աճառ լծկան,
Քառուուն կօտ էլ ոսկի (Սասնաց խարջն ի): Այսպէս զուտ զառ ի՞ն
Էն եասավուլէր չնացին
Քառուուն աղջիկ ժողին
Լցին մէկ տան մէջ,
Քառուուն կուտ կնիկ էլ ուն զանին
Լցին մէկ տան մէջ:
Քառուուն երկար կնիկ էլ՝
Լցին մէկ տան մէջ.
Պառվու աղջիկն էլ տարան:
Պառաւ խաց թխից, չնաց դըբաց կուրկին.
Կնաց տեսաւ օր Դաւիթ, տղերք ինսէծ ի կուրկի մէջ:
Պառաւ չնաց մէ խմբուղ Դաւիթին զարկեց,
Եսաց. «Դաւիթ, տէ ոչ-պարով քէւ մօրէն ծնիլքը».
Էկեր ես ինկեր ես պառվու կուրկի մէջ,
Էկեր ես պառվու կուրեկ կբանդես:
Եսաց. «Կնա, Մսրամելիք ճամփիր ի
Դրան խարջ կ'տանի. կօչախ մարդ ես՝
Կնա մի թըղնի օր րգիսրջ տանի»:
Եսաց. «Պառաւ, ընկի իմ առջիւ էրթանք:
Պառաւ ընկաւ Դաւիթի չառջիւ չնացին.
Դոնիր բիրադի շանց տից,
Դաւիթ ասայ. «Մէրիր - քուրիր, սահամ սքրիւայրա՛ ո՞վ ի հաս ուն ո
Եարէ՛¹⁾ չնացէ՛ ձեր տուն»:
Բրախից չնացին իրանց տուն.
Եսաց. «Ես կերթամ ձեր չար կ'տանիմ»:
Կնաց աճառու տիւռն էլ պացից.
Եսաց. «Ասծու հէաներ, չնացէք ձեր աիրոնց տիւռ»:
Պառաւն ընկաւ չառէշ.
Կնացին խըղնի տէ-ո:
Կնաց տեսաւ ին խատ եասավուլ կամ քափառան մարդ-բան նաև
Խըղնի գուան վերաց կայնած ին,
Ինն էլ սպանից.
Մէկն էլ մտիր ի խիզինէն կ'չափի:

1) Արեւք:

Զինչ մտաւ խեղինէն, էսաց. «Խրօխպէր, խրօխպէր *»
Կօտ տու ընձի ես եղին-եղին¹⁾ չափիմ»:
Կօտ խրօխպօր ձեռնեն առից:
Ասաց. «Մէ անգամ քէւ խէր կանչիր էր, պամարտ ուսու մէ»:
Մէկն էլ տէ- իմ փուր²⁾ չնաց»:
Էդոնց կօտ խրօխպօր ձեռնէն առից,
Կօտ շոճեց պերնէ- վերէն.
Օսկին կ'չափի կ'թափի գետին.
Եասավուլ Դաւիթի խետ կրվաւ,
Ասաց. «Էդ հնաց կ'չափիս»:
Դաւիթն էլ ինադ էրաւ.
Ինադ էրաւ զկօտ զարկից պատ.
Որ զարկից պատ' պատ շուշաց էր, ճղվաւ.
Խիզինէն էկաւ թափաւ,
Օթախը լիւ էլաւ:
Ասաց. «Քրօխպէր. Էդ փուղը քէւ կէօլս ուտէր»:
Էդ փող մեղի ունինէն,
Մէ օր տէ- ընձի կէնես նախսրչի,
Մէ օր լէօր ըսպաննդի:
Ասաց. «Դաւիթ, զլխիդ մեռնիմ,
Էդ փող մեղի ունինք՝ էդ օրն էլ ունինք,
Տարին տուսուն կօտ խարջ կ'տանք:
Դաւիթ պիրից էդ եասավուլի ականչքեր կտրից,
Ըստածերն էլ չշից, էրաւ պիպեռ³⁾՝
Զարկեց եասավուլի ճակատ:
Թուղթ կրեց Դաւիթ, տվեց եասավուլին.
Ասաց. «Կ'տանես Մսրամելիքի խամար,
Թէ՛ Մսրամելիք, ես մէ կապէկ
Քեղի խարջ չեմ ի տաց.
Կօչախ մարդ ես՝ էրի կուր անենք»:

Ե.

Եասավուլ էլաւ թուղթ վէ կալից
Կընաց գըբաց Մըսըր.
Կընաց իշկաւ օր Մէլիք ակուշկէն նստիր ի,
Դէ-բրինն էլ առի իրան ձեռ:
Հեռուանց իրիշկեց Մէլիք:

*) Բարձրաձայն գոռում է:

1) Արագ-արագ. 2) Փորը. 3) Բկեռ, մեխ:

Ասաց. «Վալլահ, իմ եասսալուկ կը բայօդ»: Իրան և հայրած առաջ առաջ ծրծաղում ա, խարջ կ'պերի»: Խոժու և միքը միքը ու ոչինչ առ առ առ: Ասաւ. «Եղ ի՞նչ պանէ ի»: Ասաց. «Ին խատ սպանիր ի, ի ուշունք ունի ու ուսուն թի»: Ամ ականջքեր կտրիրի ի, ամ ուշունք ունի ու ուսուն թի»: Ամ ատամքեր քաշի արիր ի մեխ, ամ ուշունք ունի ու ուսուն թի»: Զարկիր ի ճակտիս»: Թուղթ տուեց ձեռ, թուղթ կարդաց, ամսար մասնիք զինք ու ուսուն թի»: Զատ անսպատիւ բան մէջ կրած էր. Կանչից իրա վազիրերուն, ասաց. «Ի՞նչ կասէք, կուր էրթանիք, թը չ'երթանք»: Կու-Շեռէն կաց, էնու մէկ ձի ունի, վեց ուտանի ի: Կուզբաղին Մելքին էսաց. «Մելքիք, ինչ տաս ընձի կը թագի կը սպանիք, էլ թալանիմ պիրիմ, Կուսուն էլ թալանիմ պիրիմ, Կուս աղջկներ պիրիմ արմաղան, Յերկէն կնանիք պիրիմ ուղտ պառնան, Բուզիկ աճառ պիրենս լծան. Սասուն բիրադը պիրենս առ-թալան»: Ասաց. «Կուզբաղին, օ տեւ ըցկուն կօչալս լա, Իմ թագու գրութընը կէս կ'տամ քեզի»: Ասաց. «Տու ընձի իրիք խարիր ջուկովի ձիաւոր: Իրիք խարիր ձիաւոր վիկալիք է իւաւ: Խկաւ ճամսէն մէ արջ տեհաւ սպանից, էնու ականջքիք կտրից, առլց իրան խետ, էկաւ. Էլ Դաւթի ախուն էրկիւղ էրաւ չմտաւ չողաւ, չընոց դըբաց վան-Մարութային, չնոց Ճարպախսար-Քամին, Քաթմանաց Բիւղէն վանի պախեցողն ին: Գե-մշու նման պոռացին, էկան Կուզբաղընը դէմ»: Կուզբաղին խանեց արջու ականջքեր շանց տվից էտոնց, ասաց. «Եղոնք Դաւթի ականջքին են, ում խամար կուր կէնէք, Դաւթի սպանիր ին: Եղ էրիուս փախսան չնոցին մէ քարի տակ: Կուզբաղին. Էլ մտաւ վանի մէջ»: Սպանից քառասուն վարդապետ, Սպանից քառսուն տէրտէր, Քառսուն պակաս մէ՝ տիրացու: Էն մէկ տիրացու մտաւ խըսըրը մէջ: Կուզբաղին վանքը լուսից առից չնոց. Տիրացուն էլաւ ժամի շապիկ Տիրացուն էլաւ դըբաց արնի մէջ, էկաւ դըբաց Սասուն:

Էկաւ տեսաւ օր Դաւթիթ Նստիրի կերուխում կ'էնի: Դինի խմիր ի, քէֆ խասիր ի, ամ ընույթ միւսուն սպասութիւն: Մէ կազ¹⁾ էլ էրի խորոված Դրէ վլաւի վերաց: Տիրացուն էսաց. «Ճատ ըմ պարին մեր պարոնին, նորեւ եւ ունիրաց: Նստիր ի կ'խմի նուան գինին: Կին վան Մարութայի, Սպանեցին քառսուն վարդապետ, Սպանեցին քառսուն տէրտէր, Եռեսուն ին տիրացու: Վանս թալանեցին չնոցին»: Դաւթի, քէֆ խասիր էր—չ'խասկացաւ, Դաւթին էսաց «Տընտիս, տընտիս, Խոնւնին ի պակաս, ձէթն ի պակաս, Տըւէս տիրացուն առնի էթայ». Մէկն էլ տիրացուն էսաց. «Ճատ ըմ պարին մեր պարոնին, Նստիր կ'խմի նուան գինին: Էկան վան Մարութային, Սպանին քառսուն վարդապետ, Սպանին քառսուն տէրտէր, Եռեսուն ին տիրացու: Վանս թալանեցին չնոցին: — Էկի չ'խասկացաւ, էսաց. «Տընտիս, տընտիս, Խոնւնին ի պակաս, ձէթն ի պակաս, Տըւէք թըւղ տիրացուն առնի էթայ»: Ժամի շապիկ թալից Դաւթի առջիւ. Որ Դաւթի աչք առից շապիկն՝ Քէֆ թողից, էսաց. «Տիրացու, էղ ի՞նչ պան ի»: Էյաց. «Էկան վան Մարութային, Սպանին քառսուն վարդապետ, Սպանին քառսուն տէրտէր, Սպանին եռեսուն ին տիրացու»: Քէֆ զլսուց թափաւ: Տիրացուն նստաւ խաց ուտելու: Դաւթին էսաց.

¹⁾ Ապա:

«**Ձեռնիկի**, տիւ կուտուր մնէր,
«**Զգարկէր** իմ վարդպետքերուն սպանէր,
«**Ուսկի** գուազան կառնին իրանց ձեռ
«**Քարոզ** կըտին ժողովուրդին:
«**Ձեռնիկի**, տիւ կուտուր մնէր,
«**Զգարկէր** իմ տէրտէրքերուն սպանէր,
«**Ուսկի սրկին**¹⁾ կառնին իրանց ձեռ
«**Օրէնք** կը տին ժողովուրդին:
«**Ձեռնիկի**, տիւ կուտուր մնէր,
«**Զգարկէր** իմ տիրացու չսպանէր,
«**Ուսկի բէ-րվառ** կառնէր իրանց ձեռ
«**Խուռնկ** կ'ծխէր իմ ժողովուրդին»²⁾։
Դասիթն կասի. «Տիրաց.ւ, էնսմարդիկիւ»—զա պիտօն Շ.Ա.՝ կիւնամ
Ճշւտ ի գնացած, թէ յանագոն»։ սիւն զա պիտօն քառ և եթուու
Ըսաց. «պարուն Դաւիթ, այսիւր չ մէնին այսիւր չ մէնին
ինոնք դըբայ ուրանց երկիր կնացին,
Դաս էլ դըբայ էս թէխն իմ եկեռ»։

1) **Ակնարկ:** 2) **Երդ է:** 3) **Բերանը:**

Ճանձիր մէջ կերթան կուկան։
Տէ՛ կէրթէր Սասուն,
Կուս աղջկաէր կ'պէրէր արմաղան։
Կօլօտ կնանիք՝ էրկանք աղան.
Երկէն կնանիք էլ՝ ուղտ պառնան.
Քուղիկ-աճառ կ'պէրէր լծան,
Սասուն բիրադի կ'սերէր առ—թալան.
Բա միր մարդիր վա՞ր տեղն ին,
Ոնչ կան, ոնչ կերևան։
Ասաց.
Սիփը կապէք, ախչիկներ, խարսներ,
Մարդ կէր էն էրկիր՝ կազանական,
Էնունց նետիր գերանական,
Վար տեղ կ'զանին՝ յիտ կ'պանան,
Քանզ մէկ պատուսան,

Ձի մարդիքներ գէօ տառ-ձկւր կը տըսան.
Գործան սելաւ օր կը լնի,
Էնու ճուճ-պլոր պիրի
Ձե խամար էղի եղ ու չորթան,
Կընաց մտաւ իրան տուն,
Խորբար տարան ՄԵլքին.
Ասաց. «Կուզբաղին էկիր ի իրան տուն,
Ճամփից, Կուզբաղին էկաւ.
Ասաց. «Կուզբաղին տառապերան
Յէ-ստ կու կոս լերան-լերան,
Պերանդ պաց ի տանց կէխէնը շան,
Ճանճիր մէջ կէրթան կու կան,
Ձկւր կ'թափի քանց չոլի թան.
Տի էնագիր Ասուն.

Կուս-աղջկներ պիրէր՝ արմաղան,
Կօլօս կնանիք պիրէր՝ էրկան։ աղան
Յերկէն կնանիք՝ ուշտ պառնան,
Սասուն բիրադի պիրէր առ-թալան.
Բա մէ մարդիր վ՞ր տեղն ին,
Ոնչ կան, ոչ կերևան։
Ըսաց. «պարուն ՄԵլիք.
Մարդ կէր ընտեղ կազանական,
Ինու նիտիր գերանական,
Վար տեղ կ'զարկէր՝ ցիտ կ'պանէր



Քանց մէ պատուխան.

Զի մարդիքներ գէօ ժաք-ձեր կը տըւան.

Գորնան սելաւ օր կընկի՝

Էնուճ ու պլոր պիրի

Զի խամար եղ ու չորթան»:

Ե.

Կ'կանչի, իրան իշխանքտիր կ'ժողվի.

Իրան արնէն մէ թուղթ կ'զբրի կօրօղկի արեելք.

Մէկ թուղթ էլ կ'զբրի կօրօղկի արևմուտք.

Մէկ թուղթ էլ իրան արնէն

Կ'զբրի, կօրօղկի հիւսիսալին.

Մէ թուղթ կ'զբրի, կօրօղկի հարաւալին,

Մէ թուղթ էլ կ'զբրի, չորս կողմ աշխըրքին շուռ կածի.

Ասաց.

«Տը տամ յառջիւս խինք խազար խամար¹⁾ նուր բիդտար²⁾,

«Տը տամ յառջիւս խինք խազար խամար նորափեսայ.

«Տը տամ յառջիւս խինք խազար խամար թոխ-մօրուս.

«Տը տամ յառջիւս խինք խազար խամար խառ-մօրուք.

«Տը տամ յառջիւս խինք խազար սըվտակ-մօրուս,

«Տը տամ յառջիւս խինք խազար խամար դբհօլչի³⁾

«Տը տամ յառջիւս խինք խազար խամար զուռնըչի⁴⁾

Էնքամ զօշուն ժողվից.

Ժողվան չադրքիր զարկին,

Որ պլորի առաւօտ կուր էրթան:

Էն գիշեր Մէլի մէր էրազ տեհաւ

Որ լիս բացփա՛ էլաւ

Մէլի խամար կը պատմի,

Ասաց. «Մէլի, մի էրթայ էն կօչախի վերայ.

Մէկ էրազ իմ տիհիր.

Էրազմի զահահուրիմ իմ.

Գիշեր էրազի մէջ որ տիհայ՝

Սասլնայ աստղայ լի-ս-պայծառ էր,

Մըրայ աստղայ մութ-խաւար էր.

Մի էրթայ էն կօչախը վերայ.

Գիշեր էրազի մէջ տեհայ՝

Մըրայ ձին փախս էլաւ,

¹⁾ համար; ²⁾ նոր ծլած մօրուսով;

³⁾ թմբուկ ածող; ⁴⁾ Երդ է;

Սասնայ ձին էլ յետե խաղ էլաւ,

Մի էրթայ էն կօչախի վերայ:

Մէլիք էսաց.

«Թըղ շուտ ընձի խաբար էնէր,

Փանի էդ զօշուն չէր ժողվիր

Որ էդ մարդիկ էկան՝ պլոտի էրթամ կրիւ:

Է.

Մէլիք էնաց Թօլայ տաշտ.

Զաղըրքիր զարկից.

Խաբար ճամփից Դաւթի խամար,

Թըղ Դաւթի էաց կուր էնինք.

Խաբար տարան Դաւթին:

Դաւթին էլ իրան ժայդաշ¹⁾ տղերք առիր էր

Կնացիր էր պառվու կորկի մէջ:

Պառաւ խաց թիսից,

Էլաւ կնաց կորկի տեսութիւն:

Տեսաւ օր Դաւթի գտղերք

Առիր ընկիր կուրկի մէջ:

Մէկ իւմրուղ տղից Դաւթի գլխեւ վերայ.

Ասաց. «Գրէօլը քեզի տանէր,

Սասնայ շուշանէր:

Տէ-վուչ-պարով քի-մօրէն ճնվէր.

Էն օր էնացիր Ծովասար ավ-դուշ

Մէլիքի եասավունիր սպանիր.

Ասաց. Մէլիք էկի զօշում կապի Թօլայ տաշտ.

Կուր կուզի քեզանից:

Ասաց. «Պառաւ, ջահնամ թէ կ'ի՞ն

Զըզի բիրադի եխսիր կ'տանի,

Մէկ չախու էլ չունիմ,

Որ մէկ մարդ դնիմ գետին մորթիմ.

Հնչնիք էրթամ կուր էնիմ:

Ասաց.

«Կրէօլ քեզի տանի, Ծովատ-Դաւթի,

Պառվու խնուց¹⁾ խեծի էնս կուր էրա *).

Բա տիւ չըս գինայ

Քի-խօր ունի Քիւռիկ Քալալին,

¹⁾ հասկակից.

²⁾ Խնուցի: *) Ծաղրում է Դաւթին.

Քեւ խօր ունի խաչ-պատրազին,
Քեւ խօր ունի շապիկ զբելսին,
Քեւ խօր ունի ամարն ի մէջքին,
Քեւ խօր ունի կապէն աթըլին.

Քեւ խօր ունի խօդէն ի կըլսին,
Քեւ խօր ունի թուրըն կէծալին,
Քեւ խօր ունի գեղզ ֆէրզին:
Կըն շնորի իշխանքտիր ժողվի
Մէկ արագ տու խմին.

Խրօխապօրէ մօտէն

Քեւ խօր սիլահն ուղի.

Կը տայց խաթրով կ'տաց.

Թէ՛ որ չը տվից՝ զօրով առ մօտէն, քէօ խօր մալն իւ:

Եկաւ չնաց իշխանքտիր կանչից.

Մէկ արագ տվից իշխանքտիր խման.

Խրօխապօրն էսաց. «խրօխապէր,

Ղօշումն էկի Թոլայ տաշտ նստիր ի.

Մսրայ մելիքն ի, կոփիւ կուզի.

Խմ խօր սիլահ տուր

Օր ես էրթամ կոփիւ:

Խրօխապէր կասի.

«Էնու պերան կոտրի՝ որ քեզի ասիր ի.

Կընա, քուսուն խատ ձի

Գումի մէջ կապիր իմ.

Վար մէկը քէփդ կուզի՝ վէ կալ չնաց.

Կնաց գումի տէռ բացից, մտաւ ներս.

Վար մէկը որ ամկի վերայ ձեռ տվից

Էնու փուր առից գետին.

Կընաց, մէ կապուտ քօսուկ

Ջէրէի կօխ կապիր ին.

Օր ձեռ տվից ամկի վերայ՝

Ոտ զարկից պատ, կրակ մօտէն չնաց,

Կապուտ քէռակ տէս խանեց,

Մէկ գեղին մաջիթայ տվից պառփուն.

Ջէր տաքացըցուց,

Էզքիւզիկ Ջալալուն լըւաց,

Սուր հրամանքիւ ձիուն լեզու էկաւ,

Զին Դաւթի խետ զրուցեց, ասաց.

«Ես օխտ տարի կաց՝ քիւ խէր մեռիր ի.

Առանց գարի իմ մնացիր,

21

Զեմ կարաչ օր քեզի կոփիւ տանիմ,

Ասաց. «Հըլսէ-դ մեռնիմ,

Ասուած արեվ ի տվիր ի,

Քեզի տէր կանիր ի,

Եկաւ է-րի տըվուց ձիուն,

Կնաց խօրիսպօր կուշտ, ասաց.

«Խրօխապէր, իմ խօր շոր, թուր կուզիմ»

Ասաց. «Էն, վար տեղն օր ձին պիրեր իս,

Մէ քար կայ. Էն քար շոճի,

Քեւ խօր շուրիր—թուր էնտեղն ի»,

Դանալ միջոցներու քանիւ»

Դաւկիթ չնաց քար շոճից,

Իրա խօր շուրիր խանից խագաւ.

Որ խագաւ շապիկ օխտ փաթ էկաւ.

Քամար որ կապից, օխտ փաթ էկաւ,

Թուր որ կապից՝ թրի կէսն մնաց գետինք.

Ճեռ թալից գեղզ անջախ ձիու քամկից կախ տվից.

Եկաւ չնաց տուն.

Մէկ թուղթ Մելիքի խամար ճամփից.

Ասաց. «Իրեք օր մօհըլ չտաս

Իրեք օր որ լընանայ,

Կ'ոմ քեւ խետ կ'կովիմ»:

Իրեք օր մօհըլ տըւեց Դաւթին.

Դաւթիթ պատարագ մատուցել տվից,

Իրան օրէնքն առից

Իշխանքտերաց խալալութին ուղից,

Եկաւ իրան ձին սարկից

Իրան շորիր խագաւ,

Խաչ-պատրազին աջ թևի վերայ կապից.

Խրօխապէրն էսաց. «Տըղէրք,

Կընացէք վարաւորդ էրէք,

Էնու խէր օր ձիու զօլան¹⁾ կ'պնդէր՝

Զիու էրկու ոտ կ'վերցէր.

Թէ՛ որ էն էլ վըրցուց՝

Բալի մէ պան բաշարի.

Թէ՛ որ չըրցուց՝ կ'երթայ կ'սպանվի:

Կնացին վարաւորդ էրին.

Օր ձիու զօլան պնդից,

Զիու չորս ոտն էլ գետնուց վէ կալից,

¹⁾ Փորկապ.

Խանից իրա չէօքիրը ²⁾:

Մուշտուլով տարան խրօսպօր:
Էլաւ ձին խեծաւ Դաւիթ:

Սաաց.

«Ափսուս խազար ափսուս,

«Կնաց Քիւռկիկ-Ջալալէն Սասնայ տնէն:

«Ափսուս, խազար ափսուս,

«Կնաց թուր-կէջալին Սասնայ տնէն:

«Ափսուս, խազար ափսուս

«Կնաց գէօրմ-ֆէրըզին Սասնայ տնէն:

«Ափսուս, խազար ափսուս,

«Կնաց խաչպատրազին Սասնայ տնէն:

«Ափսուս, խազար ափսուս,

«Կնաց շապիկ-գրեխին Սասնայ տնէն:

«Ափսուս, խազար ափսուս,

«Կնաց կընաց կապէն աթղըբին Սասնայ տնէն:

«Ափսուս, խազար ափսուս,

«Կնաց խօտէն հըլլսին Սասնայ տնէն:

«Ափսուս, խազար ափսուս,

«Կնաց լւաշն Դաւիթ Սասնայ տնէն:

«Ափսուս, խազար ափսուս,

«Կնաց թըռլան Դաւիթ Սասնայ տնէն» ³⁾:

Ասաց. «Խօրխսպէր, բերանդ կոտրէր,

Ես պիտի քեզի սպանէ,

Եարաբ էդ մալ ընձանից,

Ճատ աւելի էր. օր տիւ

Ըւալ ¹⁾ մալ կափսուեր, սօրայ ²⁾ ընձի,

Ասաց. «Դաւիթ, կիստ մեռնիմ,

Դժերացիր իմ, խելչս ցնդիր ի,

Խամթրդ ըլ մնայ»:

Թ.

Դաւիթն էլաւ ձին խեծաւ, էրթէր կուիւ.

Խօրխսպէրն ասաց. «Դաւիթ,

Կերթաս ճամիսի օրթալը

Մէկ աղբէ-ր կայ էնտել,

Քէօ ձին կ'կանգնի էնտեղ,

²⁾ Բարձրացրեց մինչև իւր ճնկները.

^{3)*} Երգ է. վերջին տունը երկու անգամ են երգում.

¹⁾ Խալս. ²⁾ ապա. ³⁾ սիւն.

Քէօ ձիուն մի զօրի.

Ձիուց վէ էրի,

Էնտեղ մէկ նշխարք կեր,

Էն աղբը վերայ չընի.

Ճնորհք Աստծուց կառնիս, կընիս, կէրթաս.

Մէ սուն ճամիսը մէջ ընկած ին,

Մէ պօղվատէ սուն.

Քէօ խէր օր կէրթէր՝ թուր կ'զարկէր.

Էն սուն օր կտրէր՝ կէրթէր.

Սուն օր չ'կտրէր՝ ցետ կ'դառնէր.

Տէ- էլ կնա, թուրը զարկ.

Թի որ կտրից՝ կնա.

Թի որ չ'կտրից՝ ցետ դարձի,

Թողլ Մելիք է՞մ, ինչ կ'տանի՝ թըղ տանի:

Թաւիթ ձին քշից չնաց.

Աղբրի վերայ կայնաւ.

Ձիուց վէ էկաւ.

Մէ նշխարք կերաւ, ջէ-ր խմաւ.

Աղբրի վերայ քնաւ.

Ճնորհք Աստծուց առաւ.

Խաբար էլաւ, տեսաւ որ

Ճնորհք Աստծուց առաւ ի.

Էնի էլաւ խօր չափին:

Չանք էն վախտ ամէն շուրն էլ օխտ փաթ էր.

Ամէն շուրն էլ մէկ փաթ էլաւ.

Էլաւ ձին խեծաւ չնաց.

Կնաց, պօղվատէ սուն

Ճամիսէ ինկած էր, տեհաւ, ասաց.

«Յիշեա, խէր ¹⁾ կենդանի,

Խաչ պատրազի վար իմ աջ թեկին.

Զարկիմ զիթուր կէջալին,

Պողվատէ սուն կտրին,

Իմ գէօհար անուն չափիրի»:

Թուր զարկից, զսուն կտրից,

Օրթալլիսէն ընցաւ.

Էլի սեան կտոր մնաց կիսու վերայ,

Զինք ըլ չիմացաւ. զինք անիծից,

¹⁾ Հայր.

¹⁾ Համար, հաշիւ. ²⁾ Յաղթել.

Ասաց. «Ձեռնիկ, տեւ կուտուր մնէր,
Զարկիր էդ սեան չ'կտրիր.
Իմ գէօհար անուն
Սշխրքի մէջ աւիրեցիր»:
Թեվ թէօլացաւ.
Հարաւային տամին էկաւ
Զարկից սեան կեօխ շումից,
Դաւիթ նոր խաբար էլաւ
Թը իրան թուր կտրէր էր,
Ասաց. «Ձեռնիկ, տեւ կանաչ մնէր,
Որ զարկըցիր էդ պողվոտէ սեան կտրեցիր,
Իմ գէօհար անուն չաւրեցիր»:
Ճին քշեց ինց Թօլայ տոշտ,
Կնաց գէօդըկի կէօխ կանգնաւ,
Իրիշկեց չատիրքերու.
Երինուց աստղերուն հեսաբ¹⁾ կաձ,
Չաղըրքերուն չ'կայ.
Դաւիթ լաց էլաւ, ասաց.
«Իմ Աստուած, ես ընկիմ կատղած գէլ՝
Էնունք ըլնին գուռ,
Ես չեմ կարայ ալթ էնի²⁾,
Իմ տէր Աստուած,
Էնունք ըլնին գըզած բամբակ,
Ես ըլնիմ կրակ՝
Ես չեմ կարայ զէնունք վուի»:
Ասու հրամանքիւ ձին խաբար տվից,
Ասաց. «Դաւիթ, մի էրկումըտի.
Քշի, էսաց, էնքան օր տեւ սպանիս՝
Էնքամ թրի-կրակի առջեվ կ'վառվին,
Էնքամ էլ խաչ պատրագին
Կ'պատուխասի, կ'մեռնին,
Էնքամ էլ ես իմ ոտաց յառջեւ կ'տրուրիմ,
Էնքամ էլ իմ քամին կ'թալի կ'մեռնին,
Էնքամ էլ ես իմ պուշով կ'սպանիմ,
Էնքամ էլ ես իմ պինջով կ'սպանիմ.
Մի էրկումըտի, քըշի»:
Քշից ինց. Ասաց.
«Քանըմ, պիտի մէ խաբար էնիմ,

¹⁾ Մէկ կողմ. ²⁾ Փուչ.

Նոր էրթամ կրիւ, ասաց,
«Վով քներ էք՝ զարթին կացէք,
«Վով զարթին էք՝ ձիանք թամփէցէք.
«Առանց մահ իք՝ ձե մահ իմ պիրեր.
«Առանց կրէօղ՝ ձի խոզին կառնիմ *).»
Ճին քշեց. կնաց լազար սպանից, մէկը վերայ կանգնաւ. Դարձաւ.
մէկ էլ դարձաւ, լազար էլ սպանից. էլի մէկը վերայ կանգնաւ, է-
րուն էկաւ, օր ջանդաքներ կրտանէր, մէկ խալվիր մարդ «փոշտ»
էրաց. (փոշտ կանչելն ինչ ի.—փոշտ կանչելն էնի, որ զօշում զինք
եան¹⁾ կ'տայ), էդ խալվիր էկաւ Դաւիթի կուշտ, ասաց. «խալվիր,
հալա ես օխտ տարեկան իմ, աշխարհք չիմ մտիր. տեւ ընչի ընձի
«փուշտ»²⁾ կ'կանչիս:

Ասաց. «Դաւիթ, գլխեղ մեռնիմ. ես փուշտ չեմ կանչի, փոշտ
կէնիմ, որ զօշում զինք եան տայ, ես ի՞սմ քիւ խետ զրուցիմ»:

Ասաց. «Խալվիր, եարի»,

Խալվիր էկաւ էնտեղ, ասաց. «Դաւիթ ասաց. «ինչ ի, խալվիր»:

Ասաց. «Դաւիթ, շատ մարդ կայ, մօրէն մէկ ի. շատ մարդ կայ,
օլուխս-չօլուխը տէր ի. շատ մարդ կայ՝ մրազը վերայ ի, որ պըտի էր-
թայ կարգուի. տեւ ընչի էնունց մեղաց տակ կը մտնիս. Կնա, էրէ
ախալքրդ էնտեղն ի, ինց թէ վար էնու սպանիր՝ մենք քէօ ըւեաթն-
ինք, քեզի կուլլու կ'էնենք. տեւ ընչի էդ մարդերու մեղաց տակ
կ'մտնիս»:

Ասաց. «Քինայ, շատ լաւ ասիր, կնա, ասաց, Մելիքի չաղիր պե-
լեր կայնի, որ ես զիտնամ էնու չաղիր վարն ի. ինց, զատացիր, տեւ
ախսուս մարդ իս, իմ ձիու քամին քեզի չթալի վնասի»:

Խալվիր ինց Մելիքի չաղիր պելեր կան էկաւ¹⁾, իրան փափախ
թալից. Դաւիթ չիմացաւ. Զինք ինց զատուն²⁾ կանգնաւ. Դաւիթ
ձին քշից ինց Մելիքի չաղիր վերայ:

Փ.

Մելիք ժնած էր. Մելիքի մէր, առասուն աղջիկ չաղրը տակ նըս-
տած էր:

Դաւիթ ասաց. «Մայրիկ, Մելիք վի խան³⁾ ես էկիր իմ կը-
ուուինք»:

Մէրն ասաց. «Էն էլ քէօ ախալքրն ի, չուր օխտ օր պիտի չնի..
իրիք օր քնիր ի, չորս էլ պիտի չնի»:

¹⁾ Երգ է.

²⁾ Ման եկաւ. ³⁾ Հեռուից.

³⁾ Արթնացրու.

Պերից գեղականի խոփ թալից կրակի մէջ, կարմրցաւ, թալից Մելքը ոտաց վերաց: Մելիք ոտերաց էրացաւ. ոտ քաշից, էսաց. «Ճ, փուչ ըլնէք, աղջըկնիր. իմ շուրիր թամբը չէս պահըր. լըւիր ընձի կծին»:

Դաւիթ ասաց. «Մելիք, Մելիք, աչքերոյ պաց արա, լեւ չի, եսն իմ, աչքերդ պաց արա»:

Որ աչքեր պաց արաց, զԴաւիթ տեհաւ, ասաց. «Ճուն շան օրթի. յետ դարձի հնա. էդ անունն էլ քեզի խամաց բաւական ի, որ մէկ ժամանակ գեղականի էս ձիով հնացի Մելիքի չաղոր, Մելիք վախեցաւ, իրա չափրից տիւս չէլաւ»:

Դաւիթ էսաց. «Ճուն մարդ էն ի, որ մարդիւ շան օրթի կ'կանչի, ես չիմ էրթաց, եկիր իմ էստեղ, ես պիտի քէօ իսեա կռուիմ. վեր էլի, որ ես տիւ կռուինք»:

Մելիք կըլնի, կասի. «Դաւիթ»:

Կասի. «Բնչ ի»:

Կասի. «Ո՞նց կռուինք».

«Ո՞նց քէօ քէֆ կռուզի. կռուզի՝ գլոմշի նման առլով զարկինք մէկի, յես ուզի՝ ձիով կ'կռուինք»:

Մելիքն էսաց. «Ախալէր, նօբաթով! ¹⁾ կռուինք»:

Էսաց. «կռուինք»:

Էսաց. «նօբաթ ինձի ի, թըր քեզի»:

Էսաց. «նօբաթ քը խամաց ի. ընձի մէր չունիմ, լուր չունիմ. ընձի սպանես էլ՝ մարդ չկայ լաց ըլնի իմ վերաց. ես կ'ստիմ, տեղիք անգամ ընձը զարկ, թէ որ սաղ մնացի՝ նօբաթ կ'կայ ընձի. թէ որ մեռայ կ'պրծնիս»:

Դաւիթ նստաւ:

Մելիք ձին քշեց հնաց հեռու. ձին քշեց էկաւ. մէկ գեղոզ զարկից, Դաւիթին, Դաւիթ. խաչ—պատրազին, տվից գեղոզի դէմ, թող տրպից Դաւիթի կմիւտ վերաց, Մելիքն էսաց. «Ափսուս, խազար ափսուս, Դաւիթ շախինք—պախինք, զարկինք սպանինք»:

Դաւիթ էսաց, «Մելիք, հալայ ես կամ, չիմ մեռիր»:

Մէ խելի էլ հեռացաւ, մէ գեղոզ էլ զարկից, էսաց. «Ափսուս, խազար ափսուս, Դաւիթ շախինք—պախինք, զարկինք սպանինք»:

Էսաց. «Մելիք, հալայ ես կամ, չիմ մեռիր»:

Մէ խելի էլ հեռու հնաց Մելիք. էկաւ մէ գեղոզ զարկից Դաւաթին, թող տուեց Դաւիթի կըլսիւ վերաց, ասաց. «Ափսուս, խազար ափսուս, Դաւիթ շախինք պախինք, զարկինք սպանինք»:

Դաւիթն էսաց. «Մելիք, հալայ ես սաղ իմ, չիմ մեռիր»:

Էսաց. «Որ սաղ իս՝ էկիր, նօբաթ քէօնն ի»:

¹⁾ Հերթով.

Դաւիթ վեր էլաւ, վեր էլաւ, տեսաւ որ վիզ ծռվէր էր, մէ խմրուղ զարկեց, էրան վիզ դպեց:

Էսաց. «Ծնչի դրբի դէմ չիս կայնի»:

Մելիք էսաց. «Դաւիթ. ես կ'վախենամ. ես մտնիմ իմ ձիու փորի տակ»:

Դաւիթ էսաց Մէլքին, «Մի մտնի քիւ ձիու փուրի տակ. առուսուն գաղ գետքն փուրի, մտի մէջ. առուսուն գոմշու կաշի սլի թալ քէօ վերաց. քէօ ձին էլ թըր կանգնի քէօ վերաց, մէկ դարբ կը բաշխիմ Աստրծուն, մէկ դարբ կ'բաշխիմ քիւ մօր ծընը կաթին, որ էն որ տեւ ընձը կը խեղդէր՝ քէօ մէր չթողեց, մէկ դարբ կ'զարկեմ; թի որ սաղ մնացիր՝ նօբաթ կ'հայ քեզի. առուսուն գաղ գետին փորից մտաւ մէջ, զիւմշու կաշի թալից ուր վերաց. ձին էլ կանգնաւ վերաց. Մելքը մէր էսաց. «Ախչներ, էլէք բռնէք եալի խաղ էրէք, Դաւիթ օր հայ ազար տղայ ի, կըրը թիւլ կ'զարկը Մելիքին էլ չի սպանի»:

Աղջկներ կըլնին եալի կ'պանին. խաղ կէնին. Դաւիթն էլ պիտի հեռու հայ, Դաւիթ կայնաւ ձիու կշտին, ասաց.

«Յիշեա խէր կենդանի»:

Բարձր Աստուածածին,

Խաչ-պատրազին

Վըր իմ աջ թիվին,

Զարկեմ զթուր կէծակին

Կտրի զձին, առուսուն գոմշու կաշին,

Քառուսուն գաղ գետին,

Թալիմ Մելիքի գլխից, էրթայ

Էրկու ոտաց օրթալրէն տիւս հայ»:

Դաւիթ օր քաշեց զթուրն կէծակին, կրակ թըրը պիրնէն թափաւ. Մելքի մէր ասաց. «Աղջկներ, թողէք ըզեացին, ես կ'տեհնամ զթուրն-կէծակին, տի քանդի տուն Մելքին»:

Դաւիթ էսաց.

«Յիշեա խէր կենդանի,

Մարութաց բարձր Աստուածածին,

Խաչ - պատրազին

Վըր իմ աջ թիվին»:

Կտրեց ձին, կտրեց առուսուն գոմշու կաշի, թըրեց Մելքի կէօխ, չնաց էրկու ոտաց արանքէն տիւս էլաւ, թըրը կէօխի հնաց առեց. Աև ջեր ^{*)}: Հրեշտակ թեվ տվեց յառջիկ թէ չէ սե ջեր տըլնէր աշխարհք կառնէր. Մելիք ասաց. «Դաւիթ, հալայ սաղ եմ», Խազար չելաւ, թըր

^{*)} Հեռաւորութիւնն է ցոյց տալիս:

թէ-ր կտրեր էր. Էսաց. «թէ որ սաղ ես՝ վեր իլի, նօրաժ քէօնն ի»:
Վուր վիր էլաւ՝ մէ կտուր դէս չնաց, մէ կտուր դէն չնաց: Աջա-
կողմը Թաւիթ դիւր ձիուր վերայ պիրեց ժամով-պատարագով թալսել
տպեց. ինչ ձախ կողն էր՝ մնաց էնտեղ անտէր, շըներ դիլեր կերան:

ԴԱՒԻԹ ԵՒ ԽԵՆԴԻԹԻԹ ԽԵԹԻԻՆ

Ա.

Խանդիթ-խաթին Խոյայ տղաք.

Քառուուն խատ փահկւան

Բիրադի էկած Խանդիթի խամար.

Տենանք վոր մէկին որ կ'հաւնի, առնի;

Մէկին էլ չխաւնաւ Խանդիթ-խաթին:

Երկու խատ աշըղ ման կ'լով

Էկան չնացին Խոյայ տղաք.

Խանդիթ-խանում կանցեց

Էն աշըղտիքներուն, տարաւ որ սազ էրին:

Խանդիթ առեց Խանդիթի մօտից.

Ասաց. «Քառուուն խատ

Ֆէրբգ-փահկւան ինչի խամար էկած»:

Խանդիթն ասաց. «Ամէնն էլ

Ընձի խամար են եկած,

Մէկին էլ չըմ խաւնի, չըմ առնի»:

Ասաց. Խանդիթ խանում,

Քէօ լազրին օր առնես՝

Տը, Թաւիթն ի, Մհերի տղէն»:

Ասաց. «վ՞ր տեղն ի».

Ասաց. «Սասնայ տղաք».

Ասաց. «Ձեզ բոլ փարայ տը տամ,

Էրթէք Թաւիթին գէօվէք ընձի,

Թաւիթ չոյ էստեղ,

Թաւիթ տեսնամ որ գԹաւիթ առնեմ»:

Աշըղտեր էլան սազ էնելով

Կնացին Սասնայ տղաք.

Կնացին Թաւիթի կուշտ ասին. «Թաւիթ,

Խանդիթ-խանում քէօ ումուգն ի»:

Թաւիթն էսաց. «Ընձի խամար գէովացէք,

Տեսնենք աղէկ ի, թի վատ ի»:

Աշըղտեր Թաւիթին ասին.

«Էնու սըւտակութեն կ'նմանի պամպակ,

Էնու ծըծեր կ'նմանի պամպակի քէօլահի ¹⁾

Էնու ճակատի լէնս օխտ թիզ ի, մէկ չարէ՝ էլ աւելի.

Էնու աչքեր կ'նմանի ջինու քսսակի ²⁾:

«Թաւիթն ասաց.

«Աշըղտեր, տիւ պարով էկի»:

Քանց կոռն անարատ ի,

Գէլու նման ես կատղայ.

Քանց աշէն-վայ չիւր՝

Իմ սիրտ զուզալ ³⁾ էր,

Գարնան սելաւի նման»:

Իմ սիրտ պղտորվաւ»:

Թաւիթն էլաւ Քէօվկիկ-Ճալալին հանեց.

Քէօվկիկ-Ճալալին խենաւ.

Ակուատն (խասաւ) Առէլս ^{*}),

Ճաշին էկաւ Կապրուտիր,

Կէսօրուան էկաւ Բահբահան,

Տեսաւ օր օխտ գէթան գէթան կէնէր.

Նստեր են խաց ուտելու:

Թաւիթին ասին նստի խաց անուշ էրա.

Էդ գէթան քւորներ օխտ աւուր

Խաց-չէ-ր պիրիր ին:

Թաւիթ չնաց նստաւ խաց ուտելու.

Օխտ գէթանի խաց ու ջէ-ր կերաւ խմաւ,

Էլաւ օր պիտ էրթէր.

Օր կէրթէր՝ գէթընորքեր

Նստան զրուցին. «Օխտ աւուր

Խաց ջիւր էդ մենակ կերաւ.

Մենս ճամիսենս տիւն

Տասին կէսօր իք չնացի,

Ձէ խաց ջի պիծեր ի

Թէ օր ասենք կօնախ էկե մէկ մարդ

Չեն հաւատայ.

Թասենք գէ-մէշն ի կէրե՝ էլի չեն հաւատայ:

Էդ խօսք Թաւիթ լսաւ, ասաց.

«Տըղէրք, ինչքամ տեղ պիտի

Գէթան էնէք էդ օխտ օր,

¹⁾ Կծիկ: ²⁾ Յախճապակէ աման: ³⁾ Պարզ, զմիտ:

^{*}) Պատմողի ասելով գտնուում է Մոկաց երկրին կից, դէպէ արևմուտք.

Ասաց. «Եդ դաշտ պիւլե-բով ՝¹⁾
Պիտի գիւթան էնինք»:
Դաւիթ էսաց. «Գիւմշըներ թողէ»:
Գիւմշըներ թողին:
Դաւիթ գիւթնը պալատին ՝²⁾
Թալեց եր ձիու դէօշ,
Զարկեց գիւթան. մէկ խողի չափ մնաց:
Մէկ մարդ ասաց. «Դաւիթ,
եդ քէօ հիւնար չի,
եդ քէօ ձիու հիւնարն ի»:
Դաւիթ ձիուց վէ էկաւ,
Գիւթնի զնջիլ առեց իրան ձեռ.
Դաւիթ զինք զարկեց գիւթան.
Գիւթընւոր ապաց.
«Տըղայ Դաւիթ որ կասեն
Աշխըրքի մէջ՝ տէ ես,
Վար տեղն որ կերթ աս՝
Քիւ ոտ քարին չդիպնե.
Աստուած քեզի վատ օր շանք չտայ»:

Բ.

Դաւիթ ձին խեծաւ քշեց ճամբախ.
Յըրկին չնաց Խոյաց-աղաք.
Համտէօլ էլ դունապան էր.
Համտէօլ զտէռ փակեց.
Փակեց, գԴաւիթ չառեց ներս.
Դաւիթ էսաց. «Համտէօլ,
Տէռ բաց էրա, ընձի առնես»,
Համտէօլ էսաց.
«Խանդիթ-խանում թամբըսիր ի ՝¹⁾,
Որ մտնի՝ աւու մի պան».

Էսաց. «Համտէօլ որ տէռ չես բանայ,
Քէօ մատ էդ դուան կողին խան,
Մէ պաքեմ, իմ սիրտն խովանայ.
Էս Խանդիթի խամար եմ էկեր,
Էստեղ կ'մնամ, չէօր լէս կ'պացի»,

¹⁾ Ջրջակաւքով. ²⁾ Ճիթալ.

Նէ-ր կ'նամ ներս»:
Համտէօլ որ իրան մատ
Դուան կողին խանեց,
Դաւիթ թալեց համտէօլի մատ բռնեց.
Որ քէշեց՝ ոտաց դամարքեր ՝¹⁾ կըտրաւ էկաւ,
Համտէօլ էսաց. «թող, տիւռ. պաց էնիմ.
Տըղայ-Դաւիթ որ կասեն՝ տէ ես»:
Տիւռ պաց էրաւ, Դաւիթ առեց ներս:
Ասաց. «Դաւիթ, քառսուն խատ
Ֆէրք-փակըրւան էկած ին,
Կնունց ձիանք գէօմ ին կապիր իմ,
Տեղ չունիմ որ քիւ ձին կապիմ»:
Ասաց. «իմ ձին տար քշի գումի մէջ,
Էնիկ իրան տեղ կ'գտնին.
ԶՔիւռկիկ-Ճալալին քշից գիւմի մէջ.
Էն տառսուն ձիու եօնջէն-գորին
Մօտրքերուց առից,
Քառսունն էլ ժողվից պիրից
Դուան ժամակ կայնան,
Համտէօլ չնաց մուշտուկուդ տարաւ Խանդիթ-խաթէնին,
Ասաց. «Դաւիթ էկաւ»:
Էն տառսուն խատ ֆէրք փակըրւան լսան.
Պիրին ամէն մէկ մէ ժամաց զինի լցին,
Տանք Դաւիթ խմի խարբի,
Որ զարկինք սպանինք,
Խանդիթ-խանում Դաւիթ չառնի,
Որ Դաւիթին չառնի՝ վար մէկին կառնի, թըղ առնի:
Քառսուն խատ թուր էլ
Քաշած ի դրած դաստախանի ՝²⁾ տակ,
Որ կալուն թրով զարկեն գԴաւիթ սպանեն:
Դաւիթ որ կ'նաց,
Կիւ ժառակ չեմ,
Օր ընձի ճիւռ կուտէք
Գինու կարաս ընձի շանց տւէք,

¹⁾ Երակները

²⁾ Սփոռոց:

Կրթամ գինի խմեմ չամ խաց ուտեմ:
 Մէկ կարաս օլսու տարվան քացալս-գինին
 Դաշտին շանց տվին.
 Կնաց կէօլս մտցուց կարասի մէջ.
 Էն մէ կարաս գինին բիրադի խմաւ.
 Եկաւ դաստախանի վերաց նստաւ,
 Ասաց. «Համտէօլ, ինա ընձի խամայ խաց պեր»:
 Համտէօլ ինաց խաց պիրեց.
 Դաւիթ խաց կէրաւ.
 Խաց կերաւ պլծաւ, դաստախան վրցուց,
 Տեսաւ որ ժառանուն թուր
 Դաստախանի պակ դրած ին:
 Քառունն էլ փաթթեց մէ մէկի, ասաց.
 «Համտէօլ, տար քցի իմ ձիու խուրջին,
 Մէկ տարի իմ ձիու խամար նալ կ'էնիմ»:
 Համտէօլ տարաւ գցից խուրջին,
 Եկաւ Դաւիթի կուշու.
 Դաւիթ. Էսաց. «Համտէօլ,
 Կնա Խանդիթ խաթիւնին ասա
 Կոյ էստեղ տեսնիմ»:
 Համտէօլ ինաց Խանդիթին էսաց.
 «Դաւիթ կասի թըր ի՞նչ տենամ»:
 Խանդիթ խանում էսաց.
 «Դաւիթին ասա շատ մի վրազնա.
 Առաւօտ կերթանք Գիւլբաղի մէջ,
 Գիւլբաղի մէջ մէ մէկ կ'տեսնանք»:

9.

Մնաց չի-ր լէօս պացվաւ.
 Խանդիթ-խանում էկաւ,
 Կ'ընացին Գիւլբաղի մէջ.
 Դաւիթ Խանդիթը երիս պագից,
 Սիրտ չխովացաւ, ճակատն էլ պագից.
 Ելի սիրտ չխովացաւ.
 Երկու ծըծը օրթալը պագից.
 Խանտիթ խանում մէ իւմրուղ
 Զարկից Դաւիթը պերան.
 Իրեք պուտ էրուն Դաւիթի պերնէն էկաւ.
 Ասաց. «Տիւ իմ ցիրիս պագիր

Քիւ ջահկլթընը խամար.
 Տիւ իմ ճակատն էլ պագիր՝
 Քիւ սիրու խամար,
 Ընչի, տիւ Պառն Տօռն
 Լնձի խամար դիլ¹⁾ իս պերի
 (Օր տիւ իմ էրկու ծըծը օրթալը կ'պագիս)»:
 Ասաց. «Խանդիթ-խանում,
 Խարամ կենաց ընձի, օր ես քեզի չառնիմ,
 Զէր Օղան-Տօղան քը խամայ դիլ պիրիմ».
 Թողին էկան ինացին տուն.
 Յըրկուն մութ տվից.
 Դաւիթ էլաւ կոտոր կանգնաւ.
 Ասուած կանչից. «Իմ Տէր Ասուած,
 Եան տիւ ձի մախ²⁾ րմ տաս,
 Եան կոիւ տաս, Օղան-Տօղան
 Կեան էստեղ, կովինք»:
 Ասուած Դաւիթին մախ չ'տվից.
 Նա ինչ կոիւն էր՝ տվից:
 Քնաւ, չիւր լէօս պացվաւ.
 Օղան-Տօղան դօշում կապին
 Էկան Խոյայ ժաղքէ վերայ.
 Էն ժառանուն խատ Ֆէրզ-վահլըւան
 Մէկ մէկին կասին. «Մինք կոիւ չինք էրթայ»:
 Ես չուրս տարի, խինդ տարի
 Էստեղ նստիր ինք.
 Մենք խանդիթի իրիս չինք տեսիր.
 Դաւիթն ցէրէկն էկաւ,
 Կնաց Գիւլբ-բաղը մէջ,
 Խանդիթն տեսաւ. Խանդիթի խետ քէֆ էրաց.
 Թըր Դաւիթն էրթայ
 Օղան-Տօղանի խետ կոիւ էնի»:
 Դաւիթ. Խաւ էդ խօսք, ասաց.
 «Կը՛ոըշմալ³⁾, ՚իս վուր կոիւ ուզիր իմ
 Իմ ջանը խամար իմ ուզիր.
 Ասուած կոիւ ինձի ի տվիր.
 Զեզի չեմ ասի, որ ինացէք կոիւ»:
 Դաւիթ Խանդիթին էսաց.
 Էլի իմ շուրիր լըւայ»:

) Գերի: 2) Մահ: 3) Հայկոյանք! :

Պատարագ մատուցել տվից,
Խըր օրէնքն առից,
Զին խեծաւ չնաց,
Ասաց. «Խանդիթ-խանում,
Ես որ կէրթամ կուիւ,
Իրիք օր որ կը լրմանայ,
Իմ քամիչն կու կաս.
Թէ՛ որ սպանվա՞՝ խաչ պատրագին
Գէօ մի թէկի վերայ կապած ի.
Էն խաշով ընձի կ'ճանչնաս,
Կ'պիրիս ժամով—պատարագով
Ընձը կ'վերցիս.
Թէ՛ որ սաղ մնացի՝
Կու հաս մէ մէկ կ'տեսնանք»:
Դաւիթ ձին խեծաւ չնաց կուիւ.
Մէկ օր շատ զօշում սպանից.
Խաչպատրագին մոռցաւ,
Խաչ-պատրագու անուն չ'տվից,
Զու թիւի վերայ իրիշկաց,
Որ ձախ թիւին իրիշկաց՝
Օղան-Տօղան քամնդ՝¹⁾ թալից, Դաւիթ պոնից.
Պէրին տախտակ ծակին,
Դաւիթը կէօխ մէջէն տիւս խանին.
Օղան-Տօղան, էրկուսն թագաւոր ին,
Նստան Դաւիթի թիւքերու վերայ,
Կիր ու խում էրին.

Դ.

Խաբար վա՞ր տեղանց տանք.—
Սասնայ.
Զէնէօվ-Յէօվան աստղ կ'ճանչնէր:
Յըրկուսն մութ էտու.
Զէնէօվ Յէօվան էլաւ տիւու.
Իրիշկից, Դաւիթի աստղ տեսաւ,—
Նվազ էր, խիւանդ էր,
Կնկան ասաց. «Ճիրին-Անախուն Գիւհար.

¹⁾ Փոկ (շեկափոկ պարան).

Իլի Մրազ¹⁾ ձին տիւս խան,
Դաւիթ նեղ տեղ ի կնկիր.
Եան Դաւիթի լէշին²⁾ կխասնինք,
Եան նաշին³⁾ կ'խասնին:
Ճիրին- Անախուն-Գիւհար ասաց.
«Զէնէօվ-Յէօվան, Դաւիթ մտիր ի
Խանդիւթի ծոց.
Ցէ քի խամար կը գընիս
Դաւիթի խամար էրազ կ'տեսնաս»:
Խաբեց գԶէնէօվ Յէօվան.
Զէնէօվ-Յէօվան էկաւ հնաւ.
Կէս քիշերվան մէկ էլ տիւս էլաւ.
Իրիշկեց Դաւիթի աստղին. նվազիր էր,
Ասաց. «Ճիրին Անախուն Գիւհար,
Իլի Մրազ ձին տիւս խան.
Եան Դաւիթի լէշին կ'խասնին.
Եան նաշին կ'խասնին,
Դաւիթ նեղ տեղ ինկիր է,
Իլի կնիկ Զէնէօվ-Յէօվանի խետ կռվաւ.
Ասաց. «Տիւ չ'թողիր էս օր քն'ի.
Դաւիթ մտիր ի Խանտիւթի ծոց,
Քէֆ կանի, տիւ Դաւիթի խամար էրազ կ'տեսնաս:
Իլի Զէնէօվ-Յէօվան ինոց հնաւ:
Աքլէօրականչին էր. Զէնէօվ-Յէօվան
Տիւս էլաւ մէկ էլ.
Իրիշկեց Դաւիթի աստղին.
Քիչ ի մնացիր՝ օր աստղ մեռնի:
Զէնէօվ-Յէօվան կնկան էսաց.
«Էլի Մրազ ձին խան տիւս.
Կնիկ չէլաւ:

Մէկ լանգի⁴⁾ զարկից,
Մէկ կողաշար կոտրից.
Զէնէօվ-Յէօվան զինք չնաց
զՄրազ ձին տիւս էխան.
Ասաց. «Մուրատ Աստուած. Մրազ ձին,
Ցիփ ընձի կ'խասցիս Թուլան Դաւիթին»:
Ասաց. «Զէնէօվ յիրիկուն:

¹⁾ Զիու անունն է: ²⁾ Դիւալ: ³⁾ Պագաղ:
⁴⁾ Աքացի.

Ասաց. «պերանդ կուտրէր».
 Զինք զըրըկուն տըղը լէշին խասնիմ, թը նաշին»:
 Մուրադ Խստուած. Մրազ ձին
 «Յիփ ընձի կ'խասյիս Թուլան-Դաւթին»:
 Ասաց. «Զէնէօվ-Յէօվան,
 Տիւ կարան իմ քամակ պախիս.
 Քի տը տամ արեգական դէմ ք-իլ¹⁾ կէնիմ»:
 Ասաց. «ընձի կ'տամ քու փուրի տակ»:
 Ասաց. «Կ'բիրիմ քեզի կ'տամ գետին,
 Կերթաս յանդէ-նդ»:
 Ասաց. «կըլնիմ քիւ ամակ»:
 Ասաց. «ըի խեծի»:
 Զէնէօվ-Յէօվան զձին խեծաւ.
 Վըրցուց տվից արեգական դէմ.
 Զինք տվից իւր փուրի տակ.
 Պիրից որ տէր գետին
 Զինք էլաւ ձիու ամակ
 Զէնէօվ Յէօվան մէ կէօխս զձին թողից
 Օխտ աւուր ճամբախ մնաց.
 Ասաց «Խաւիթ, Խաւիթ, բերանդ կուտրէր,
 Խաչ-պատրագին մտախան իս էրիր»:
 Խրօխապօր ձէն օր առից ճանաչից, ասաց.
 «Յիշեամ խէր կենդանի,
 Մարութայի բանձր նսուարածին,
 Խաչ-պատարագին
 Վեր իմ աջ թէկին»:
 Խաւիթ փուր զօրեց՝ տախտակ ճղվաւ.
 Խաւիթ տիւս էլաւ.
 Օղան-Տօղան կապաւ դրից էնտեղ,
 Զինք մէ կնարէ, ¹⁾ Զէնէօվ-Յէօվան մէ կնարէ,
 Էդ լոշում բիրադը ջարտին.
 Էկան մէ տեղ, մէ մէկ ճանչան.
 Խաւիթ Զէնէօվ-Յէօվանին ասաց.
 «Մողեաթ կաց, օր Օղան-Տօղան չ'փախչին.
 Իս կերթամ ջրի վերայ կ'լիացվիմ,
 Կ'դառնամ կ'խամ կ'երթանք»:

¹⁾ Մոխիր:

Թ Լ Ո Ւ Ա Տ Դ Ա Ւ Ի Թ

ԴԱԻԻԹ ԵՒ ՊԶԾԻԿ ՄՀԵՐ

Ա.



աւիթ չնաց ջրի վերայ.

Յղան-Տօղան էրուր դէպան.

Զէնէօվ-Յէօվան էրկսին էլ սպանեց.

Խաւիթն էկաւ լսրոխապօր խետ կրվաւ.

Ասաց. «Ընչի սպանիր Յղան-Տօղանին.

Պիտի զիւ տանի Խանդիթ-խաթիւնին.

Խաւիթ իրիշկից, օր Խանդիթն էկաւ.

Խաւիթ ցխրօխպէրն էսաց.

«Էդ ձիաւոր օր կուչաց՝ Խանդիթն իւ.

Տիւ էստեղ նստի. ես կերթամ

Խանդիթի խետ մէ գիւլաշ կ'մտնիմ.

Նուրէն տիւ կիսո կէրթանք»:

Զէնէօվ-Յէօվան նստաւ.

Խաւիթ չնաց Խանդիթի յառջե.

Կանչեց Խանդիթին.

«Էն մարդ, փուր տիւ լիտիւ կան կուչաց՝

էս օր իրիք օր կայ ընձի դուրբան իմ էրէ.

Խանդիթ-խաթուն էսաց.

«Խարիր քի նման, էրկու խարիր իմ նման

էն մարդուն դուրբան ըլնին»:

Էրկուս ձիուց վէ էկան.

Մտան զիւլաշ.

Խաւիթ Խանդիթի ծիծ բռնեղ ժամեց.

Իրիք պուտ էրուն մօտէն էկաւ.

Ասաց. «Թող. Դաւիթ որ կասին՝
Տիւ ես. դԴաւիթ ճանաչից,
Կանչին, Ձէնով-Յէօվանն էլ էկաւ.
Դաւիթ էսաց Խանդիթ-խաթիւնին.
«Խանդիթ խանը.
Խրօխպէրս մենձ մարդ ի,
Թըղ յառէջ քէլի.
Էս էլ էնու քամկէն կ'քալիմ,
Տէւ էլ իմ տմկըն էլի.
Երիքով կերթանք ձեր տուն»:
Երիքով էլան ճամբախ, կ'նաշին.
Կնացին Խոյաց աղքին ծոտացան.
Խանդիթ-խաթիւն մէ զանդի
Տըկից ձիուն յանց կացաւ.
Դաւիթ, Ձէնէօվ Յէօվան յետ մնացին:
Դաւիթ Ձէնէօվ-Յէօվանին էսաց.
«Ել մենք Խոյաց աղդաք չենք էրթայ.
Մեզի մենձ ամօթանք ի,
Մէ աղջիկ էլ զմեզի ճամբախ թողից,
Զինս յանց-կացաւ չնաց.
Ես էնու յիմ առնի»:
Էլան ճամբախ բռնին.
Դըբայ Սասուն կուէն.
Համտէօլ խաբար տարաւ Խանդիթին,
Ասաց. «Դաւիթ կնաց»:
Խանտիթ խաթիւն էլսու
Քեամկէն վազից, կանչից Դաւիթին,
Դաւիթ չխանաւ,
Ասու մէր տվից, էսաց.
«Աստուած սիրիս՝ մի էրթայ»:
Որ Ասու անուն տվից՝ Դաւիթ կայնաւ.
Խանդիթ-խանումն էկաւ.
Էսաց. «Դաւիթ, մէ էրթայ.
Էրթանք տուն, պսակինս.
Մալ կայ, դէօվաթ կայ, կառնինք կէրթան»:
Դաւիթն ասաց.
«Տէւ ընձի մենձ ամօթանք իս տըւի
Էլ ես էն տողք յիմ մըտնը.
Քէֆդ կուզի՝ էրի էրթանք.

Քէֆդ չի ուզի՝ յետ դարձի կնտ քէօ տուն»:
Զարէն կտրաւ, Դանդիթի լսիտ էկաւ.
Կնացին Սասուն.
Եօթ օր, եօթ գիշեր խարսնիս էրաւ.
Խարսնիս որ պրծաւ.
Մէկ տարի Դաւիթ Խանդիթ մէկ տեղ ժնան.
Որ տարին թըմըմաւ.
Խանդիթի ոտ Ճանդր էկաւ.
Դաւիթ տեսաւ, որ Խանդիթ.
Չկարաց տուն կառափարի, ոտ Ճանդր ի,
Դաւիթ Խանդիթին էսաց.
«Տէրթամ Գիւրջստան էրկիր
Մէ գիւրջի օղուշաղ պիրիմ
Քեզի ծառայութեն էնի,
Տէւ կէր, խմի քեզի քէվ էրա».
Պէրից մէկ ոսկի բաղբանդ
Տիլից Խանդիթին Դաւիթ.
Ասաց. «Թէւ որ աղջիկ էլաւ,
Էղ բաղբանդ կ'ծառէք կուտէք.
Թէւ որ տղայ էլաւ»
Ոսկէ կատաւ կ'կարիս էնու թիւի վերաց,
Կ'ճամփիս կու հայ իմ գէմ.
Սըլթան-Զըմուչ իմ խետ տիւշման ի,
Կ'կայ իմ ճամբախ կըկտրի»:
Դաւիթ չնաց Գիւրջստան էրկիր.

Բ.

Ին ամիս, ին օր, ին սհամի, ին տանդիկաց
Որ թիւմըմաւ՝ Աստուած տվից
Խանդիթին մէ տղայ էլաւ.
Տարան մկրտին, անուն գրին
Պիջտի Մէր

Աշխարհի տղէս տարի կը մընծանէր,
Էմա Մէկը օրէ կ'մընծանէր.
Տարին որ թիւմնաւ՝
Մէկը կերթէր ճան խաղ կէնէր.
Էրէւէս Մէկը բին կ'կանչին.
Մէկը չնաց մօրն ասաց.

«Հնչ՝ բիրադը ընձի բիճ կ'կանչին»:
 Մէր չասաց թէ քիւ խէր
 Կ'նացիր ի Գիւրջստան էրկիր:
 Կ'նաց մէ պառվու մօտէն խաբար առից,
 Ասաց. «Պառաւ, ընձը խէր չունիմ,
 Երէխէ՛ բիրադը ընձի բիճ կ'կանչին»:
 Ասաց. «Քէ՛ խէր Դաւիթն ի.
 Կ'նացիր ի Գիւրջստան էրկիր.
 Մէկ գերջու էրնիկ կ'պիրի
 Որ քէ մօր Ճառայի.
 Մէկ օսկէ կաքաւ էլ տփիր ի քէ մօր,
 Որ ընձի տղայ կըլնի՝ օսկի կաքաւ
 Կ'կարիս էնու արխալզը վերայ,
 Կ'ճամխիս կ'այ իմ յառջիւ.
 Սըլթան Զըմուչ իմ խետ տէշման ի»,
 Պառաւ որ Մհերին էսաց՝
 Մհեր ինաց մօր կուշտ, ասաց.
 «Որ իմ խէր ինացիր ի Գիւրջստան էրկիր,
 Խս պիտ էրթամ իմ խօր յէռջիւ»:
 Մէրն էլ պիրից օսկէ կատաւ
 Կարից Մհերի թիվի վերայ,
 Գիւրջստան էրկիր ճամբախ
 Գանց տփից, Մհեր ինաց:

Գ.

Խաբար տանք Դաւիթի մօտէն,
 Դաւիթ Գիւրջստան էրկիրն էկաւ,
 Մէ խօրօտ նազանի,
 Հօրի-փարի պիրից.
 Էկաւ կէս ճամխին Սըլթան-Զըմուչ
 Էկաւ ճամբախ կտրից,
 Դաւիթին ասաց. «Պըտի հաս կովինք»,
 Դաւիթ էսաց. «Իմ ձեռ օղուշաղ կայ,
 Խս կերթամ, խաչ-պատրապին
 Ջըհաղ մնայ, ութ օր թըմըմի՝
 Խս իտ քիւ խետ կովիւ էնիմ»:
 Ճամբախ տփից, Դաւիթն էկաւ,
 Մհերն էլ ինաց Դաւիթի յառջիւ:

Մհեր իրիշկեց, տեհաւ որ
 Մէ խալվիւր մարդ մէ խօրօտ կնիկ
 Առիր ի իրան ձիու թարք կուկիւց
 Կանչեց, «Է՛, խալվիւր,
 Տիւ խալվիւր մարդ՝
 Էղ ջահէլ օղուշաղ
 Քէօ լացըլին ի, որ առիր իս
 Քէօ թարք կ'տանիս»:
 Էնդեխ Դաւիթի սիրտ էլաւ,
 Ասաց. «Էսքուն նով իմ մտիր,
 Իմ ձիու ճանիր չի թացվիր.
 Էսքուն զիտ իմ ընցիր,
 Իմ ձիու նալիր չի թացվիր.
 Մըկաց մէ պարակ առու իմ տեհիր,
 Կուզը որ ընձի խեղդը,
 Զի թողի օ ես ընցնիմ:
 Մհեր էսաց. գիւվայ տիւ-
 Թաղաւորի խետ կովւ իս էրիր.
 Մարդ քեզի չի գորիր,
 Գիւվայ պարակ առուն չս իմ,
 Զիուց վէ էլի, 'իս տիւ մտնենք գիւլաշ»:
 Զիուց վէ էկաւ, Դաւիթ Մհեր մտան գիւլաշ.
 Մտան գիւլաշ, Մհեր Դաւիթին տփից գետին.
 Դանակ խանից որ գԴաւիթ զինէր,
 Դաւիթն էսաց. «Ա՛յ տղայ,
 Տիւ ընձի կ'սպանիս.
 Ավսըր ընձի տղայ ունիմ
 Իմ տղէն կը կոյ քեզ կ'մորթի»:
 Ասաց. «Քէօ տղէն հին ի»,
 Ասաց. «Իմ տղէն էն ի,
 Օսկէ կատաւ էնու թիվի վերայ ի»,
 Որ էցկուն էսաց՝ Մհեր խօր ճանցաւ.
 Ասաց. «Տիւ Դաւիթն իս»,
 Ասաց. «Խա, ես Դաւիթն իմ.
 Ասաց. «Ես էլ Մհերն իմ, քէօ տղէն իմ,
 Օսկէ կատաւն էլ իմ թիվի վերայ ի.
 Դաւիթին թողից, էլաւ.
 Մհերին անիծից, էսաց.
 «ԱՊՇԵՐ. անոնահ, մնաս աշխարը մէջ.

Անպլուղ մնաս»:
Որ անըծից՝ էն սհաթին
Պտուղ մէջքէն տարան:
Մհեր ըլըկաւ,
Կնաց Խոյ, Քեռի-Թորոսի տուն:

Դաւիթ գէն կնիկ առից էկաւ Սասուն,
Խրան տուն, Խանդիթը կուշտ.
Էրթիւմ էր կերի, որ եօթ օր թիմէր.
Էրթէր Սըլթան-Զմուչի խետ կոխւ էնէր.

Խրան էրթում մուացաւ:

Եօթ օր կընաց եօթ տարի
Նուր միտն էկաւ:
Խանդիթին էսաց. «Ելի, մէ պղինձ
Ջիւր տաքացըցու, իս պիտի լողանսամ
Էրթամ Սըլթան-Զմուչի խետ կովին»:
Խանդիթ խանում էլաւ
Մէ պղինձ ջիւր տաքացըցիւց.
Խանդիթին էսաց.

«Խս իմ շուրիր կ'խանիմ կ'լլզանամ,
Համաց ինչ տեսնիս՝ լնձի չափա»:

Ջուրիր խանից.

Խանդիթ-խանըմ ջիւր լցրից

Դաւիթի վերաց, Դաւիթ-լէօլացաւ.

Խանդիթ-խանըմ էսաց.

Դաւիթ, էդ ինչ դամար ի

Քիւ համկի վերաց սեացիր:

Դաւիթ էսաց. «Բերանդ կոտրէր, Խանդիթ-խաթիւն,

Քեզի ասի, ինչ կ'տեսնաս՝ մասի.

Օր էրթամ կոխւ՝ լնձի կ'սպանին»:

Էլաւ էնաց Դաւիթ.

Կնաց Սըլթան Զմուչի կոխւ:

Չիւր ճաշէն կոխւ կէնէր,

Ճաշին կ'փախնէր մտնէր զրի մէջ:

Մէկ պառաւ բուսում պախից,

Գիւթնը խուփ իրի,

Կնաց կարմունչը վերաց.

Իր աշխատ քարտիդ ունի
Վիճ առօր և բան դժուար է անուն
Խութը առն առն մարդ է պահան
Պահան զայտակ ունի ունի ունի

Ռազմակ ունի ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի

Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի

Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի

Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի

Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի

Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի

Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի

Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի

Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի

Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի

Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի

Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի

Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի

Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի

Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի

Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի
Պահան զայտակ ունի ունի ունի

Դաւիթ օր մտաւ չըի մէջ,
Պառաւ կարմունչից գիւթնի խուփ
Զարկեց Դաւիթին,
Դաւիթ ջիւրի մէջ սպանից,
Դաւիթ օր բէօռաց,
Էնու ձէն էնաց տաղաւ,
Մհեր իրան խօր ձէն լսաւ.
Ճանանչից իրան խօր ձէն.

Քեռի Թորոսին էսաց
«Ելէ» էրթանք, իմ խէր էնացիր ի
Սըլթան-Զմուչի կոխւ.
Իմ խէր սպանին»:

Էօռաց, ձէն էկաւ ըստեխս:
Խինք քեռիք իրու խետ առից
Էկան էնացին Սըլթան-Զմուչի կոխւ
Մտան Սըլթան-Զմուչի տաղաք,
Մհեր քեռի-Թորոսին էսաց.

«Քեռի Թորոս. Սըլթան Զմուչի
Մէ օյին բագ մարդ ի.

Կատու կընը, թագը կընը, օչսար կընը,
Մէկ օյնբագ մարդ ի.
Անա որ կ'մտնինք տաղաք,
Ոչսար ընը, կատու ընը, ինչ որ ընի,
Սպանէք, մը թըղնէք»:

Մտան տաղաք.
Ինչ կաց չկաց բերագը սպանին.
Սըլթան-Զմուչի զինք էլաւ մէ կատու.
Կնաց մնիրի կէօսի, նստաւ էնտեղը,
Մհեր տեսաւ ասաց.

«Քեռի Թորոս, Սըլթան-Զմուչի
Մէ կատու ելիր ի, էցիր
Մընիրի կէօսի նստիր ի»,
Մհեր նետ-անեղ եղարկ,
Սըլթան-Զմուչի սպանից.

Էլաւ իրա խօր ջամդակ իբարձ
Տարաւ Սասուն,
Փամով պատարագով վըրցուց.

Ե.

Թողից չնաց Խոյաց ժղաք,
Քեռի Թուրուսի տուն.
Ամէն օր կերթին ավղուշ.
Վէրը փուչչար կ'սպանին կ'պերին տուն,
Կուտին, Մհերին չեն ի տայ:
Օրերուց մէկ օր էլի չնացին ավղուշ.
Եկան դաշտի մէջ.
Մհեր էսաց. «Քեռի Թուրուս,
Պըտի էք ըստեղ տրընկէօզայ խաղ էնինք.
Մհեր ձեռ տուից մէ դղամի ծառ կոռից.
Ծառի կէօխ առից գետին.
Սաց. «Քեռի Թուրուս,
Տիւ խինք ախպերով չնացէք
Ծառի կէսին նստէք,
Իս էլ քէօք կ'պախիմ»:
Քեռիք խինդն էլ չնացին
Ծառի կըլիու վերայ նստաւ.
Մհերն էլ քէօքի վերայ նստաւ.
Մհեր որ զծառ թողից,
Ծառ զքեռիք խինդն էլ թալից,
Խինդն էլ մեռան.
Զին, թողից էկաւ Սասուն.
Կնաց խրօսագօր (Ձէնէօվ-Յէօվանը) տուն:
Մհեր մնաց Ձէնէօվ-Յէօվանը տուն.
Մէկ իրիք-չուրս տարի մնաց,
Ձէնէօվ-Յէօվանը կնիկ.
Անուն կիրին. Անախուհ-Գիւհար -
Աչ ցից Մհերին, Մհերին էսաց.
«Կաս իմ խետ կէօխ մէկ էնիս.»
Ինչ որ էսաց, կըլէօխ մէկ չարաւ,
Ելաւ ջիւր տաքացըցուց,
Իրան կէօխ լըւաց,
Մհերին խաբից, էսաց.
«Երի ջիւր լցու իմ կլսիւ վերայ»:
Մհեր չնաց ջիւր լըցիւց
Ինու կըլսիւ վերայ.
Սաց. «Երի իմ խետ կէօխ մէկ արաւ:

Մհեր չ'չնաց:
Ձիրին Անախուհ Գիւհար էլաւ
Իրան մազիր փլսից,
Իրան շուրիր ճըղբատից:
Ձէնէօվ-Յէօվան էկաւ, չնէն էսաց.
«Ընչի՞ քիւ շուրիր ճըղբատիր իս,
Քիւ մազիր ժշգիր իս.»
Էնտեղ էսաց (սութ ասաց).
«Մհեր ձեռ էլցի ընձի.
Ես էլ ձեռ չըմ իտայ.
Զօրովայ ¹⁾ ձեռ թալից
Իմ եախէն ճըղբատից,
Իմ մազիր ժշգիր պոկից».
Ձէնէօվ Յէօվան էլաւ
Մհերի վերայ դիւռ փակից.
Մհերն էսաց. «Տիւր պաց էրաւ».
Ձէնէօվ-Յէօվան էսաց.
«Քեռի չեմ սպ խի, իմ տնէն դիւռ ըլի չնո»:
Մհերն ասաց. «Խրօսապէր,
Քէօ կնիկ քեզի խաբիր ի.
Իս քիւ կնկան ձեռ չըմ կցիր ի.
Քիւ կնիկ ընձի խամար
Քանց լիւսն արեգակն ի.
Քանց Թըրլան-Գաւթի գերեզման ի.
Իս քիւ կնկան չեմ մօտացիր ի, սուտ կասի»:
Մհեր թողեց չնաց խօր գերեզմնի վերայ.
Նստաւ լոց էլաւ.
Ենքան լոց էլաւ, Սսուած կանչից.
Փաւիթ մէն տփաւ, Մհերին էսաց.
«Ընչի՞ խամար լոց կըլնիս»:
Սաց. «Սասնաց միւլքից ընձի տիւս էրած»:
Սաց. «Որթի, թափիր մազն ի կլսիւն,
Փախիր ի ամօթն յերեսաց.
Եղին չ'կաց, որ տիւս ընկմ,
Ասուած հրամանի չի տայ.
Կնա Վանաց ուազիր ¹⁾
Ակուափու ժար կաց.


¹⁾ Բոնութեամբ:¹⁾ Ուազ-այգի. պատմողը տեսել է, ահագին բլսւը է.

Մըտը էն ժարը մէջ
Քէօ լսացն թխված ի.
Քէօ կերակուրն էլ էփուած ի.
Չի-ը Քրիստուսը չալստեան,—
Որ Քրիստուս կայ,
Կուսըղէն աթոռի վերայ նստի,
Արդար-մեղաւուր մէ մէկուց ջըկի՝
Էն օր դիւ տիւս կըլնիս»:
Կնոց մտաւ Ակռափու ժար:
Տարի մէ անգամ էլ էնու ձիու շեռ
Քարից դիւս չտայ:



Ս Ա Ս Ն Ա Յ Ծ Ո Ւ Ե Բ

(Արարատիան բարբառով)



Ե Ր Կ Ո Ւ Խ Օ Ս Վ Ք

Հայ-ժողովրդական-դիւցազնական նոր վեպի—Սասնայ ծոերի-
զանազան վարիանեներն արդին յայտնի են ընթեցող նասարակու-
րեանը, Սակայն սոյն վեպն Երարատեան բարբառով՝ առաջին ան-
գամն է լոյս աշխարհ գալիս:

Մենի այս վարիանը գրի ենի առել Ս. Էջմիածնում (1899,
յունիար). պատմել է վանիի ապարակի ծառաներից մէկը, Աստու-
րենից Մարտի, Դուրի *) գիւղացի, մօս 35 տարեկան։ Մկրտիչը սովորել
է իւր համազիւղացի ծերունիներից, որոնի գաղքած են եղել Տան-
կաստանից (Ղըզը-Ղայա). ուրեմն եւ, պէտք է ընդունել, հայ ժողովր-
դական վեպը տանկահայերից է անցել ռուսահայերին։ Պէտք էր սպա-
սել, որ վերոյիւեալ Մկրտիչը պատմէր ոչ քէ Երարատեան բարբառով,
այլ իւր բուն հայր նիքի-Ղըզը-Ղայայի բարբառով. բայց նա, ինչ-
պէս եւ նրա համազիւղացիները, բոլել են իրենց բուն բարբառը եւ
խօսում են Երարատեան բարբառով, որշակայի բնակիչների լեզուի
ազդեցութեան տակ ընկնելով։

Վերոյիւեալ Մկրտիչ սովորական զբաղմունին երկրագործութիւնն
է, բայց ձմեռ ժամանակ ծառապելու մասնաւում է անուան։

Ա. Գ. Ա.

*) Դովորին գտնուում է Էջմիածնի գաւառում. կից է Քանաքեռի
անդին։

Ա.

ՍԵՆՅՈՒՐ ԵԽ ԲԱՂԳՅՈՒՐ

Սկիզբն մի կոապաշտի թաքաւոր ա լընում. թաքաւորին էրկու տղայալնում. մէկի անունը՝ Սանասար, մէկինը՝ Կաղապատ: Ամա էդ կոապաշտի կնիկը քրիստոնէի ավսիկի էր, նստած էր հաւատում: Աէագլոբ չոլլամիշ արաւ¹⁾ թաքաւորին, թէ՝ « ինք ինք զիտում ես, որ քո կնիկը քրիստոնէի աղջիկ ա մենք լսելով, որ Սանասարին էլ, Բաղդասարին էլ դարցնում ա դրբի²⁾ սատուածպաշտութիւն», իդ կոապաշտ թաքաւորին ասում ա, « թէ ես ճիստ³⁾ իմանամ որ իմ կնիկը կոքերին չի հաւատում, նստած ա պաշտում, ցառաջ⁴⁾ տղեր բս կը սրպանես, ետոյ կնիկս»: Յիմացաւ թաքաւորը էս մարթից էն մարթից, որ կնիկը Աստուած ա պաշտում, տղերքանց էլ բանից հանել ա, « ճիստն իմացաւ թաքաւորը: Իրիկունն եկաւ տուն, տղեքուն ասու, թէ՝ «Պէտք ա էթանք իմ կոքերուն, իմ չաստուածներուն երկրսպաքութուն անէք»: Կնիկը իսկը հասկացաւ, որ պէտք է տղեքուն տանի զոհի կրոքերի գէմ: Որ քընեցին՝ կնիկը քշերը⁵⁾, սորուեցրեց իրա տղերքուն, թէ՝ « նուաւոտը քընից կը ենէք, եփօր ձեր հէրը կ'տանի ձեզ զոհի՝ ձեր զիւրզը, ⁶⁾ ձեր նետ ու անեղը ձեր վերարկուի տալին կը պահէք. էն վախար, որ ձեր հէրը կասի թէ եկէք կոքերին երկրսպաքութուն արէք, ասէք թէ թաքաւոր, մենի չենք իմանում, դու մի երկրսպաքութուն արա, որ տեսնենք թէ լնչպէս ես անըմ, որ մենք էլ անենք: Թագաւորն էն ժամանակ, որ չոքերը տուեց զետինը, որ իր կուռքը համփուրէք՝ տղերքը զլսողով տուեցէն, հօրը սրպանեցին ըսեղ:

Եփօր սպանեցին՝ երկու ախտէրով վախան, էտ քաղաքիցը: Կիան մի չօլ, եաբան⁸⁾ տեղի, սկսեցին էրկու ախտէր. խորհուրդ արեցին, թէ մեղի մի շինութուն շիքենք⁹⁾ ըստեղ: Վերացին մենծ քարավիներ, ու շէլինդ են շինում իրանց: Եփօր էդ շինութիւն շիկեցին պլծան, մէկ կեղ¹⁰⁾ շիքեցին: Էս անքամը դնացին իրանց մէրը որ պերեցին, մէրն ասաւ. « Քնացէք ձեր քեռու մօտ, որ իմ ախտէրն ա, պէրէք ըստեղ, որ հաստատուի կեղը»: Կնացին իրանց քեռի աղգատոհով առան էկան: Եփօր որ քեռին էկաւ հասաւ ըստեղ, քեռուն եախտամիշ արան, թէ՝ « Քեռի-Թորոս, մեր կեղին անուն դիր»: Ըստ, որ տեսաւ մենծ-մենծ քարէր են պերէ, ասաւ. « Էս

¹⁾ Մատեռութիւն արաւ: ²⁾ Պէլի: ³⁾ Ճիշտ: ⁴⁾ Առաջ, սկզբում: ⁵⁾ Ճանապարհով հանել է, խարել է; ⁶⁾ Գիշեր: ⁷⁾ Երկաթէ գէնք է, ծայրը երկար դնդով, որով հարուածում էլն թշնամուն: ⁸⁾ Ամալի: ⁹⁾ Ջինենք: ¹⁰⁾ Գիւղ:

Սասուն ա, էս ինչ քարեր էք դըրէ, սասուն¹⁾ քարեր ա», ըտու հրմար մնաց « Սասուն», էդ քաղաքի անունը: Ըտեղ եփօր ժողովան մէ քսան - եռուուն տուն, կեղ էրան իրանց հրմա՝ Քեռի Թորոսը պերեց քրիստոնէի աղջիկներ առաւ մէկը Բաղդասարին, մէկը Սանասարին, պըսակեց: Իրանց հրմա քըհանաց օծեցին, Սանասարին էլ դրին թաքաւոր Սասունայ մէջ:

Բ.

ԵԲԼԵԳ ԵԽ ԻՇԽԱԿԻ

Մէկ տարի էրկու տարի մնաց, Սանասարի կնիկը պառկաւ, էրկու տղայ պերեց: Քըհանէն պերեցին, կնքեցին, մէկի անունը դրեցին Խշան, մէկինը՝ Աբլաղ:

Ժամանակ ընցաւ արանքիցը՝ շատ ժամանակ: Էդ տղերքը դար ցան²⁾ ամէնքը քսան տարեկան: Ըտոնց հէրը, Սանասար, վախանուաւ: Բաղդասարն էլ վախճանուաւ:

Եբլաղն ու Խշանը լաւ ձխանք ունէին: « Ծովասար կար՝ կէթացին ընտեղ սեհր անելու³⁾: Էն ժամանակն էլ Բաղդատաց խալիթաց կար, էն էլ կոապաշտ էր. ընդուր ժողովուրթն էլ դալում էր Ծովասար լացաղ⁴⁾:

Եփօր Խշանն ու Եբլաղը կնացին սեհր անելու Ծովասար, կնացին կոապաշտերու մէկի չադրի գուռը, դիան որ ըտեղ մի գեղցիկ ախչիկ կաց: Եբլաղն ասաւ, թէ՝ « Խշան, ես սկտք է էս ախչիկն առնեմ, որ չառնեմ կը մահանամ»:

Խշանն ասաւ. « Մէնք քրիստոնեայ ենք, մեզի կը սազի կանք էդ կոապաշտի ախչիկն ուղենք»:

Եբլաղը պատասխանեց, թէ, « Որ մենք կոապաշտերուց չտանինք հացցնենք, թէ ենք մեր հաւատի վըրէն, ինյով պէտք է մեր Սասունը հաստատենք թէ մենք մեր սուրբ Սատուածը կանչելով մեր թրի զուռվ մենք պէտք է կոապաշտները դարցնենք, Սասուն քաղաքը շիկնենք»:

Սսաւ « Թու զինաս, ախչէր»:

Կնացին էդ մարթու ախչիկն էլ ուղեցին, էդ մարդն էլ իր ջանի

¹⁾ Անագին, սարսափեկի: ²⁾ Պարձան: ³⁾ Զքօսնելու: ⁴⁾ Եայլաղ, ամառանոց:

երկիւղիցը տուեց: Էնպէս խօսք տուեցին, որ ամսից ետ կան էդ ախչիլը տանեն, քանի որ էլը չի քոչէ կնացէ Բաղտադ: Էդ ախչիլն էլ, դու մի ասա, Բաղդատայ խալիթի խետ նշան դրուած ա լինում: Հտեղ խօսք տալում են իրարու, եդ են դառնում գոլում են Սասուն: Էդ իրանց արած զործը Քեռի-Թորոսին պատմում են: Քեռի Թորոսը պատասխանում ա, թէ «Ճատ լաւ էք արէ, համա շուտով ձեր զործը աւարտէք, գնացէք էդ ախչիլը պերէք, որ էլը¹⁾ չը քոչի էթայ, Բաղդատայ խալիթին էլ կառնի էդ ախչիլը ծեր ծեռնից: Դու էլ, քաղաքն անուէր ա մնացել, դու էլ պըտի ըլիս թաքաւոր. գնա ամուսնացիր արի, որ ըլիս», — քանի որ ազաք²⁾ մարդը չեն անում էն վախտը:

Էդ մարդիքը թամբիր³⁾ արեցին իրանց հըմար, գնացին դըբաց էդ ախչիլը, Ծովասար, քանի որ էդ Ծովասարը Բաղդատայ խալիթի ձեռին էր, ընտուր հապտակին էր: Գնացին հասան էն չաղըը, բարե տուեցին, նստան: Թօէ. «Ինչ՞ էկ էկել».

Թօէ. «Էկեր ենք մեր հախունն՝⁴⁾ տանինք:

Էդ մարդն ասաւ, թէ հըմիկ դուք կպեր էք իմ եախչէն՝ ժամանակին էլ դուք ընձի տիրապըտէք, որ Բաղդատայ խալիթին իմ քորը կ'էրիցընայ⁵⁾, իմ ախչիլը ընդուր նշանածն ա»:

Իշխանն Աբլաղին ասում ա, թէ. «Չունքի Բաղդատայ խալիթին նշան դրած ա, արի ձեռ քաշի էթանք, բալքի ախչիայ սիրուը էն թաքաւորին ա»:

Աբլաղին ասում ա. «Անհնար ա, ես պըտի էս ախչիլը տանին, Բաղդատայ խալիթի ձեռից ինչ կալում ա՝ թօ անի»:

Էս էրկու ախպրով վեր են ունում իրանց հախունն ու էթում: Եփօր որ տանում են հասցնում Սասուն՝ Քեռի-Թորոսը քհանայ ա պերում, ախչան մկրտում են, հացացնում, պսակում ա էդ ախչիլը Արլաղի վերէն: Պսակը որ պրծնում է՝ բերում են Աբլաղին անում են թաքաւոր:

Զու արաւ էդ Ծովասար Բաղդատու խալիթու ձեռից առաւ, էլը սըպանեց, չը թողաւ որ լազաղ կան ընտեղ, թէ. «Բաղդատ որտեղ ա, Ծովասար որտեղ ա, չեմ տայ ծեղի, գնացէք»:

Էն զէս սովորովթիւն ին⁶⁾ էրած էրկու ախպրով, — էն մայրսի իրեք ամսին կէթին լազաղ էդ Ծովասար: Աւրիշ մէկ մարդ էլ չեն տանի իրանց խետ, իրանց ձիանքը կը խեճնին, կ'էթացին. մէկը բոզ էր, մէկը՝ կարմիր. խրեղէն ձիանք ին, ծովից դուս էկած ձիանք ին:

¹⁾ Քոչը: ²⁾ Ամուրի, չամուսնացած: ³⁾ Պատրաստութիւն տեսան իրանց համար: ⁴⁾ Հսրաբ: ⁵⁾ Վրմասու կացին: ⁶⁾ Անց. անկատարի յոդն. Յ-րդ. դէմ-քը-էին:

Եփօր Բաղդատայ խալիթին լսեց թէ էդ մարդիկը իրեք ամիս զնում են լազաղ, Ծովասար, ասաւ. Քաղաքն անտէր ա մնում, զնամ առ ու եսիր¹⁾ անեմ պերեմ»:

Էն ժամանակը, որ Բաղդատայ զօշունը ժողովեց պերաւ Սասունայ չորս բոլորն առաւ ու կայնաւ՝ մարդ ճամբեց քեռի-Թորոսին, թէ «Եա²⁾ իմ զանիմը³⁾ տուր, որ կայ ինձ խետ կռուի, եա էլ չէ՝ քաղաքդ առ ու եսիր կանեմ կը տանեմ»:

Քեռի Թորոսն ասաւ. «Ղանիմ ըլ կաչ որ տամ ինքը զիգայ իրա Աստուածը, ինչ կարայ թօ անի»:

Լցուաւ զօշունը Սասունայ մէջ: Ինչքան էդ ու որց կար՝ ամեն բան առ ու եսիր արաւ կնաց:

Էդ քշեր ովկասարին Իշխանն էրազ տեսաւ: Էրազի միջին տեսաւ, որ աշխարհ լուս էր ու արև էր, Սասուն՝ մութն ու խաւար:

Ձէն տուեց Աբլաղին, վեր խանեց, թէ. «Վեր, ես մի զարձանաւու էրազ եմ տեսեր»: Էրազը պատմեց ախպօրը, թէ, «Ես տեսաց, աշխարհ լուս էր, արև, Սասուն՝ մութն էր, խաւար»:

Ասաւ. «Եղպէր, ես էլ եմ էդ էրազը տեսէ»:

Ասաւ. «Մեր ազգին տուովի ա, մեր ձիանքն իմաստուն ին, որ մեր պազի նեղութեան մէջ ըլնի՝ ձիանքն իրանք իրանց մըսըրքի տակը կը քանդեն. վեկաց տես»:

Իշխանն էլաւ տեսաւ, որ իրանց ձիանքը ամէնքը մի չոքի չափանդել են մըսըրներու տակլի»:

Ըուաւորը որ լուսը պացուաւ՝ ձիանքը հեծան, էկան հասան Սասուն: Որ էկան հասան Սասուն, տեսան որ քաղաքին մարդ ըլ կաչ, բիրազի առ ու եսիր արած տարած են: Կէս ման էկան, դէն ման էկան, տեսսն, որ մէկ փորից մին նըւոց ա զալիս մարդու: Ձին քշեցին զնացին փորի վրբէն կացնան, տեսան, որ մի պառաւ օղլուշաղ⁴⁾ ա, զօշունի ձիանքի հետ էկել ընկէ էդ փորը: Փորից դուս պերեցին պառաւին. հարցոն, թէ. «Կս քաղաքի մարդը նէր ա, պանաւ»:

Պառաւը պատասխանեց, թէ. «Ոչ Իշխանն ըլնի, ոչ Աբլաղը, ոչ էլ իրանց թաքաւութիւնը, կնացին էն կռապաշտի էն լիրը ախչիլը պերեցին, Բաղդատայ խալիթի նշանածը, իրանք էլ գաղքին չը մնացին. Բաղդատայ խալիթին լմացաւ որ իրանք քաղաքին չէն՝ էկաւ էն մէկ օղլուշաղի հըմար քաղաքը առ ու եսիր արաւ կնաց»:

Ասաւ. «Պառաւ, որ կողմովը տարաւ»:

¹⁾ Աւար և կերութիւն: ²⁾ Կամ... կամ: ³⁾ Հակառակորդ մարդիկ:

⁴⁾ Կինարմատ:

Թէ՛ «Ես կողմովու տարաւ»:

Ղօշունի իզզը¹⁾ առան ու կնացին: Կնացին, մէկ օր, էրկու օր ճանապարհ կնացին, տեսան որ մէկ տիւղեահ տեղ²⁾ Բաղդատաց խալիֆէն զօշունը չագր ա տուեր. ուտում են, խմում են, քէջ են անում իրանց հրանց, հայաց չեն հասել Բաղդատ:

Եղ մարդիկն էլ մօտեցան դօշունին, իջան ձիանքուց, ձիանքոցը բըսովեցին, իրանց հըմար դինչըցան, հաց կերան, մինչև արեւ մտաւ: Եփո որ արեւ մտաւ, էկաւ գիշերը, Սբլաղն ասաւ. «Խշւան, դու մի ձիանքուն մուղաթ արա, ևս էթամ մի դօշունի մէջը պըտը տուիմ գամ»:

Իր նետ ու անեղը, գիւրզը վէ կալաւ կնաց դօշունի մէջ սկսեց պլոտըտիլ: Տեսաւ, որ դօշունի մարդ,-մէկը ձի ա քորըմ, մէկը քներ ա, մէկը հաց ա ուտում, մէկը ուրախութուն ա անըմ. ըտուր էլ չեն ճանաչում, դօշուն ա: Ման-կալով կնաց հասաւ Բաղդատայ խալըֆի շաղրին: Իշկեց, տեսաւ որ Բաղդատայ խալիֆէն ու իր կնիկը սադ-բինջ³⁾ են խաղում:

Ետ դարձաւ Էկաւ Խշանի կուշը: Միխասին Էրկու ախպէր իրանց ձիանքի կշտին քնեցին, զօշունից զրազ: Կուսը որ բացուած ասսւ թէ. «Խշան, զու զնա զօշունի ցածի եանը, ես կնամ վերի եանը, սկսենք զօշունը ջարդել»:

Եփօր կնացին զօշունի ամէնքը մ։ եանը կայնան, սկսեցին, ինչ
պէս որ իրանց նախնեաց մէջի սովորութուն էր, — Խշանը աղօթ.ք
արաւ կանչեց. «Օրհնեալ բարերար, կամքն օրհնեալ, էն Արարողին,
կանչենք սարերու սրբեր, ձորերու կոյս Մացր Աստուածածին, դու ըլ-
լիս օգնական՝ պահապան այս Խշանին»։ Աբրազն էլ զօշունի էն
եանին կանչեց, աղօթ.ք արաւ. «Օրհնեալ բարերար, կամքն օրհնեալ՝
էն Արարողին, կանչենք, սարերու սրբեր, ձորերու կոյս Մացր — Աս-
տուածածին, դու օգնական պահապան րիս էս Աբրազին»։

Սկսեցին զօշունը ջարդել: **Թէ** իրանք ամէնքը մի լիցուն չան թրով սրով են սրպանում՝ ձիանքն է իրանց բերնով, ոտներով հարուր ջան են սրպանում: **Վերջը** էն դօշունը էնալս ջարդեցին, որ Բաղդատակ խայիֆէն մէ յորս ձիաւորով անջախ փախաւ պրծաւ:

Ետով էդ երկու աղպէր, եփօր ջարդեցին զօշունը պրծան, Էկան
իրար պատահան: Յաչքըները արուն լցուած, քանի որ էնքան մարդ
ջարդեր են, ձիանքն էլ արունի միջին կորեր են, - իրար չը ճանանչե-
ցին: Իշխանը ձին քշեց Աբլաղի վրէն, ասաց. «Քո մէրը, քո կնիկը...»

մազեար ի՞նչքան ուժով մարդ ես դու, որ չես սըպանուէ եա չես փախչի:

Ասաւ. «Քեղնից փախնող տղայ չը կայ ըստեղ. ձեռնէդ ինչ կալում ա՝ արա», մէկ զիւրդ Իշխանն Աբլազին տուեց. որ տուեց՝ Աբլազին հէնց իմացաւ սարն էկաւ իր փրէն: Ասաւ. «Ես կայ չկայ, մեր ջընսիցն ա. ազնանց¹⁾ ջնսիցն ա (դրա հըմար են ասում ընդոնց ջընսին - «Սասունայ Տոեր»):

Աբլաղն ասում ա. «Արէն 2) իմն ա»

*Քեզնից վախենող տղայ ըր կայ, ասում ա, պրի:

Աբլաղը բարկացաւ, ձիուն մէ զանգու տուեց, ձինն ու ցինքը
թափով կնաց զիւրզով տուեց Եշւանին: Եշւանն ալբըճալը ³; ձիուցն
ընկաւ: Յիջաւ որ վիզը կտրէր: Ասաւ. «Վ'ստուած, դու իմ կլօսը
կտրեցիր, բա Նբլաղի կլօսը ոնց պլատի կտրես. հըմի Նբլաղը կը դայց:
«Դու ինչ մարդ ես, ասում ա, որ Աբլաղին ճանաչում ես:
«Ես նրա փոքր եխապան ենք:»

«Ես նրա փոքր եխպարն եմ»:
Աբլազը տեսնում ճանանչում ա, որ իրա աղպէրն ա:

«Տունդ քանդուի, Սբլազն ասում ա Խշանին, Էն զիւրպը որ
դու տուեցիր ինձ վիճաց որ մեր ազգիցն իր, էնքան ա, որ արու-
ներ աչքերս լցուեր էր, քէ չը ճանաչեցի»:

Վեր առնում ալսպիօրը, հեծնում են ձիանքը, իրանց եսիրն
էլ ետ են դարձնում իրանց գեղը Սասուն, էղ եսիրի հետ էլ՝ պերում
ա Աբլաղը իրա կնկանը: Քալում են գեղը: Մէ առ ժամանակ արան-
քից ընդունում ա: Աբլաղն ընկնում մեռնում ա: Աբլաղը որ ընկնում
մեռնում ա՝ ըղբա կնիկը էրեխով ա ըլնում: Կս անզամը, որ Աբլաղը
մեռնում ա, իշխանը իր ձինը հեծնում ա, ասում ա Քեռի.Թորոսին.
<Թու գինաս քաղաքը, ես էթում իմ ճգնութուն անելու սարը, ան-
տառները: Իրը մի փոքրաւոր ծառաց վերցնում ա հետը, ձինը հեծնում
ա ու էթում, էթում սարը ճգնութուն անելու:

9.

ԳՐԱԴԱՐԱՆ - ԱՐԵՎԵԼԻ

կդ օղուշաղը, Աբլաղի կնիկը, ժամանակին ազատուում առ մէկ տղայ ապերում: Քրհանէն պերում են կնքում են էդ տղին: Տէրսէրը հարցնում ա, թէ, «Քեռի-Թորոս, տղի անունն ինչ գնենք»:

¹⁾ Ազնամեց ցեղից: Ազնանց ցեղից, Կոյնն է թէ դիս ց-ազն: Պատմուիր բացառեց, թէ ացդպիս և կոչւում ացք ցեղը նրա համար, որ իւր սերունդ՝ Ներք պարթէ, Կոլաչ, Կին, միենոյն ժամանակ աստուածավին ծագումն ունեցող, և թէ—թիւրքիրէն ազնաւուք նշ. է դեռ հոգի առնող հրեշտակ, որից և ազնանց: ²⁾ Կերթ: ³⁾ Խսկուն:

¹⁾ Հետք; ²⁾ Պաշտ; ³⁾ Ըստմատ. ուղիշ վարիանտներում այս խաղը այլ տեսակ խաղ է:

«Քանի որ հէթըմ ա, հէր չունի, ախալէր չունի, հրօխալէր չունի ըստեղ՝ շատ դառնութիւնով պլտի անցնի ըտուր ժամանակը. հենց անունը դնենք Դանիկ—Ռբիկ:

Որ կնքում են պրծնում են, Քեռի-Թորոսը մօրից էրեխէն ճղոտում¹⁾ ա, չունքի էդ կնկայ միտքը ծուռն էր, Բաղդատայ խալիքն էր միտքը: Քեռի-Թորոսը վախում էր, որ տղին վնասէր էդ կնիկը, չունքի, որ մենձանայ՝ էլ ետ պլտի էթայ Բաղդատայ խալիքի խետ կրիւ անի, աղնանց ջրնսիցն էր, ուժով սլրտի րիէր:

Էն րոպէին Քեռի-Թորոսը մարդ ա զրկում գիւղի մէջը, թէ տեսէք հւացաղն ա թագայ ազատուէ էրեխայ պերէ, նրա մարդին դ'անչէք կայ:

Էթըմ են տեսնում, որ մի քեասիր մարդի կնիկը ազատուեր ա, էրեխէն էլ մեռեր ա: Ղանչում պերում են էդ մարդին Քեռի-Թորոսի կուշտը: «Ես տղէն, ասում ա, տար թօ քո կնիկը սահէ. քեասիր մարդ ես, քեզի հաց կը տամ, փող կը տամ, լիովի քո վարձը կը տամ: Թէ էրեխէն մի պան պատահի՝ քեզի տարալաջից²⁾ կախ կ'տամ»:

Էդ մարդը վեր ա ունում էրեխին տանում ա տալում իրա օդուշալին: Պայտանում է օղլուշաղը էդ տղին չում մի հինգ տարի: Հինգ տարին որ թըմմում է՝ բերում սաղ-սալամաթ տալում ա էրեխին Քեռի-Թորոսին: Քեռի-Թորոսը տղին սկսում ա պայտանել:

Տղէն ըլում ա տաս, տասնըհինգ տարեկան:

Եփօր որ տաս, տասնըհինգ տարեկան ա ըլլում տղէն՝ էլ ետ Բաղդատայ խալիքէն լսում ա, որ Աբլաղը մեռեր ա, Խշանն է զբնացէ սարերը ճգնութուն անելու: «Քաղաքին մարդ չը կայ, ասում ա, կնանք առ ու եսիր անենք առնենք ու կանք»: Թուղթ ա զրում իր խողի մըչին, ինչքան որ ուղեաթ³⁾ ունի իրա թրի տըկին, հրամացում ա, թէ անունը ինչքան որցեղէն կայ փէտ սպնող, պէտք ա կայ»: Էնքան դօշուն ա ժողովում, էնքան, որ աստղին հէսաբ կըլի, դօշունին հէսաբ չիլի: Ղօշունը վեր ա ունում ու դալում Սատունայ չորս կողմը առնում նստում: Քեռի-Թորոսին ջուղար ա ճամանակ տայ ընձի, իմ հարսի ձեռը ոտը տեսնեմ⁴⁾ ու. տամ առնի

Քեռի-Թորոսը ջուղար ա անում, թէ «Աբլաղը մեռեր ա, Խշանն է զնացէ սարերը ճգնութուն անելու, մէ տասնըհինգ օր ժամանակ տայ ընձի, իմ հարսի ձեռը ոտը տեսնեմ⁴⁾ ու. տամ առնի լթայ»:

¹⁾ Քոլում, անջատում է, ²⁾ Կախաղան: ³⁾ Ժողովուրդ, հպատակ: ⁴⁾ Պատրաստութիւն տեսնեմ հարսի համար:

Էդ բանին Բաղդատայ խալիքէն շատ ուրախութեամբ ընդունում ա:

Սասունայ չորս բոլոր բագան¹⁾ ա ըլլում, չորս հատ էլ գարգէահ²⁾ ա ըլլում: Քեռի-Թորոսը զեարգէահները խողի տուեց, որ քաղաքի մէջը մարդ չը մննի դօշունի միջից, փեզաւանդութիւն³⁾ անի: Խողեց դարգեահները:

Թառնիկ—Ռբիկը էլաւ, տեսաւ որ քաղաքի մարդիկը թօփունթօփուն էլած⁴⁾ զըսահ⁵⁾ ին անում: Ո՞ր թօփունի մօար կնայ՝ էն թօփունը քանդուաւ, չը կացնան որ էդ տղէն բան հասկընէր, ընդուր հրմար, որ չին զըմից անում⁶⁾, չունքի աղնանց ջրնս էր, թամիբով էր կ'էրթար կուիւ կ'էնէր, կամաւոր չէր տաց, որ իրա մէջը տանին, ասում են՝ տանք էս օղլուշաղը թօ տանի, մեզնից ուղղի:

Գնաց տեսաւ, որ էրկու էրեխսայ ճան են խաղում: Գնաց ըլոնց ճաներուցը փախցրեց: Էն էրեխսէքու մէկը աղաչեց ըզուր, թէ իմ ճանը տուր: Մէ սիլլայ տուեց էդ ըրեխին, էրեխի փողը ծուռաւ: Ասաւ, «Որ էդքան ուժ ունիս՝ դուշմանն էկէ քաղաքի չորս կողմն առեր ա, մօրդ հրմա ուզում ա քաղաքը առ ու եսիր անի»:

Գնաց Քեռի-Թորոսի կուշտը: Քեռի-Թորոսին ասաւ, «Քեռի-Թորոս, էսպէս առարկայ կայ, դու ընձի չես ասըմ»:

Ասաւ, «Ո՞րդի, սուտ ա, սուտ ա, մի հաւատայ»:

«Ի՞նչ, աստղին, խողին, քարին հէսաբ կայ, դօշունին հէսաբ չ'կայ»:

«Ո՞րդի, ասում ա, արի էդ դանջը տանք թօ առնի էթայ, մեր եալից ձեռ քաշի»:

Ասում ա. «Հնար չը կայ, քեռի, քանի որ ես սադ եմ՝ իմ մէրը չեմ տանի: Եփօր ընձի սրպանեն՝ նոր թօ իմ մէրը տանեն»:

Ինչ իլլաջ ու ճար անում ա Քեռի-Թորոսը, տեսնում ա որ ճար չը կայ՝ «Ո՞րդի, ասում ա, զու գիտաս, կուիւ անում ես արա»:

Ասում ա. «Բա իմ հէրը որ մեռաւ, բա գիւրզ, նետ, անեղ, ձինը, թուրը հւր ա իմ հօր սարքը»:

«Քո հօր սարքը, ասում ա, որդի, էն, ինչ օր թուրն ա, գիւրզն ա, նետ ու անեղն ա, քօղն⁷⁾ ա, բէանէավարին⁸⁾ ա, էդ սարքը բոլորը մէրդ լցրէ մի օժաղի մէջ, դուռը փակէ, սպանին էլ իրա կշտին: Էն ինչ օր ձինն ա, գոմի մըչին ա. ընդուր եմը,⁹⁾ ջուրը երթից են տայում, մարդ չի կարում մօտ էթայ: Ասաւ, գնա մօրիցդ ուզէ: թէ կը տայ՝ դուն էլ գնա կուիւ արա»:

¹⁾ Պարխապ: ²⁾ Պարպաս: ³⁾ Առեանգութիւն, պուռնկութիւն: ⁴⁾ Խումբ: խումբ ժողովուած: ⁵⁾ Խորհուրդ: ⁶⁾ Խողալ: ⁷⁾ Թագ: ⁸⁾ Մկրանին: ⁹⁾ Կերը:

Տղէն ուզեց էթալ, «Ո՛րդի, ասաւ, ըդենցութենով քո մէրը քեզի զա չի տայ, քանի որ էն լոէ որ Բաղդատի խալիքէն էկեր ա, հօմի էն ուրախցեր ա: Կ'էթաս, ասաւ, մօրդ կասես, Շմ հօր սարքը տու. դուշմանն էկէ դուռն առէ, էթամ կոփւ անեմ, դուշմանի ջուղաբը տամ:: Էնի, ասաւ, քեզի կանիծէ, սարքն է չի տայ: Եփօր որ կանիծէ, սարքն էլ չ' տայ՝ դու կասես, Մէրիկ, չունքի ըտենց ա, թաւէն վէ կալ կնա գետի ափից մի թաւայ աւազ պէ, եղը քանդէ լից թաւէն, դիր կրակի վրէն, թօ աւազը եղի մըջին կարմրի ես պառկեմ, դու լից իմ պերանը, թող իմ ջիգեարս խաշուի. մեռնեմ, որ չ'տեսնիմ որ դուշմանը քէ տանըմ ա, նոր քէ առնեն տանեն: Էնի, ասաւ, որ պերեց աւազը կարմրցից երով, կաբերէ որ թաւով լրջնէ քո պերանը, դու ասա, թէ Մէրիկ, թաւով լցնես՝ կը թափի փրէս, չի թափի պերանս. ճեռովդ վեր կալ աւազի արկից ու լից պերանս, որ շուտ մեռնիմ:: Եփօր որ մէրդ ճեռը կ'տայ աւազի մէջի, որ շուտ փերնի, որ իր ձեռն էլ չ'լրեցի, լցնայ պերանդ որ դու շուտ մեռնիս, դու ընդուր ճեռը պինդ սրնէ: Էն որ կասայ և եաման, ձեռս էրեցաւ:, դու ասա ևպալնիքները տուր, որ ձեռդ թողում:

Քեռի-Թորոսն էդ յուսումը տուեց տղին, ու տղէն էլ կնայ դըբաց մէրը: Որ կնաց մօր կուշար, «Մէրիկ, ասաւ, շուտ արա եկ իմ հօր սարքը տուր որ դուշմանը էկեր ա դուռն առեր ա:

«Հա հա, ասաւ, ինքն է չը մեռնի, իրա անունն է. հայա չի զօրացէ՝ չորանում ա:

«Դէհ, ասում ա, մէրիկ, չունքի զայիլ¹⁾ չես, դնա թաւէն վեր կալ գետի վրայից աւազ լից առ արի, եղն էլ քանդի դիր կրակի վրէն, լաւ եռցրու, աւազով լցրու իմ պերանը որ ես մեռնեմ, քեզի տանեն՝ իմ աչքը ըլ տեսնի»:

«Ըստենց ասա, հա, որդի զօրանաս դու:» Վեր ա ունում թաւէն ու էթում գետի վրայից աւազը լցնում պերում ա, եղն է քանդում լրջնում վրէն ու դնում օջաղի վրէն, կրակը վառում ու կարմրցնում ա: Բերում, որ թաւէն շոճէ տղի պերանը՝ «Վայ, ասաւ, ըդենց չ'է. լաւ, մէրիկ. ըդենց չի լցուի պերանս»:

«Բա ի՞նչ անեմ»:

«Ճեռովդ վեր կալ, ալըշայլ լից պերանս»:

Թաւէն դնում գետինը, ձեռը տալում ա աւազի մէջը, որ լրջնայ տղի պերանը, ջըհաննամը թէ ձեռս կ'լրեցի, չօ էս կը մեռնի, ես կէթամ Բաղդատաց խալիքին կառնեմ:

«Թառնիկ-Որբիկը մօր ձեռը աւազի մըջին սրնում ա:

¹⁾ Համաձայն:

«Նման, ասում ա, իմ ձեռն էրեցաւ Ասծու սիրուն»:

«Չէ, ասում ա, քանի որ իմ հօր սարքի տեղը չես ասէ ու բալնիքները չես տրէ՝ ես ձեւը չեմ թողաչ»:

Հանում ա պալնիքները տալում ա տղին:

Էթում ա սարքի դուռը բանում ա: Ձեռը քցում ա, գիւրզը չի կարում զեսնից վեր ունի. նետ ու անելը նմանապէստ:

Էթում Քեռի-Թորոսի կուշար, ասում ա. «Պալնիքները առեր են, հէսա դուռն է բացեր եմ, մէ վեց -օխտ մարդ ճամբէ, ասում ա, թող էթան ինչքան սարք կայ բոլորը պերեն ըստեղ»:

Վեց - օխտը մարդ Քեռի-Թորոսը ճամբում ա կթան սարքը պերելու. Սարքը պերում են քցում Քեռի-Թո, ոսի դէմ: Պերում ա քօղը տղէն դնում ա կիօսր, լջնում ա աչքերը: Բէանէշավարին հագնում է՝ զետինը քաշ՝ էթում. է թուրը լցնից¹⁾ չի կարում քաշի: Վերջապէս ամենասարքը տղին չէ յարմարում, քանի որ տղէն ջակի էր:

Քեռի-Թորոսն ասում ա. «Պերէք, ասում ա, տղին ճամբենք-վանահայրի կուշար, որ բնակում է Բանձրիկ Մարաթիկ Ըստուածանին:» Քեռի-Թորոսը վերնում տղին տանում վանահայրի կուշար. ընկնում վանահայրի ոտը. «Օխտ օր, ասում ա, մեղի ժամանակ է մնացէ, որ Բաղդատաց կուշաշտի թագաւորը մեր քաղաքը առ ու եսիր անէ տանէ. Էս օխտը օրը, ասում ա, որ քշեր ու յերիկ աղօթք-պատարգ անես, որ տղէն Սստըծու շնորհով լցուի Լթայ դուշմանի ջու:

Սկսում է վանահայրը լացով արտասուով եօթն օր պատարգ անել, Ծստուած աղայէլ, Աստուած փառաբանէլ, որ տղէն սուրբ շնորհով լցուի: Եփօր օխտը օրը թըմըմաւ՝ Քեռի-Թորոսն էկաւ վանահայրից շնորհակալ էլաւ, տղին վեր կալաւ ու տարաւ:

Գնայ քօղը դրեց, կայնեց ճակսի օրթըլիին, բէանէշավարին հագաւ, հալա մի թիզ կարճ էկաւ: Քըզմէքը²⁾ հագաւ, անջախ որ ոտները մտաւ. գիւրզը մէ ձեռով պանցրեց հասնելու գիւմին, ինչպէս մի չըբուղ³⁾, թուրը նմանապէս զընից քաշեց, նետ ու անեղը, վերջապէստ հօր սարքերը տղին հալա սլակաս էր մնում, չէր աւելանում:

Գնայ տղէն ձիու դուռը պացաւ: Ձինը խրխնջաց ու էկաւ տղի վըրէն: Տղէն «Օրհնեալ բարերարն», ասաւ ու ձիու զլիսին մի իւմբրուս տուեց: Ձիու քէֆը զլիսուցը թափաւ: Ձինը տղի զառը⁴⁾ ճանանցեց: Ձինը դուս քաշեց. դեամը տուեց դրեց կիօսր, թամքը վրէն, դուզան դուզիսունը⁵⁾ քաշեց, ձինը պերեց հօրը սարքի կուշար: Նո-

¹⁾ Պատեանից: ²⁾ Կօշիկ: ³⁾ Զեռնափայտ: ⁴⁾ Ոչժ, զօրութիւն: ⁵⁾ Զիու փորքաշը:

րից քոյլը գրեց կլօլոր, բէանէավարին հագաւ, ջըզմէ.թը քաշեց ոնները, թուրը կապեց վլէն, նետ ու անեղը, զիւրզը, ու հեծաւ իր ձին: Քեռի-Թորոսն ասաւ, «Գնացէ.ք տարգեահի մէ զանաղը¹⁾ պայ արէք, թող դուս կայ, էլ ետ խօղէք. ջահիլ տղայ ա, հըմի կը սր. պանին, ըտոնց ջընսից էդ մինն ա մնացէ, կ'վերջանայ, մեր եալուէն է կը պրցնի:

Գնացին ըդոնք, որ տարգեահը բանան:

Ձին ութիւն—տաս տարի կապուկ, յուն²⁾ ձի. տղէն մէ զան- գու խսեց ձիուն, ձինը հաւալամիշ ըլաւ³⁾: Խնքը զիւրզը տուեց բէադանը մէ եանը իջըրեց ընկաւ զօշունի մէջ, զնաց զօշունի մէկ էաթակին⁴⁾ կայնաւ ու սկսեց. «Օրհնեալ Բարերար, կամքն օրհ- նեալ. էն Արարողին, զանչենք սարերու սրբեր, ձորերու կոյս Մայր Աստուածին, Դու օդնական պահապան ըլես այս Դառնիկ—Օրբի- կին»: Ղանչեց իրա Աստուածն ու ընկաւ զօշունի մէջ: Սկսեց էդ զօշունը ջարդիկ: Խնչքան որ ցինքը ջարդում էր՝ զօշունը հաստատ- ում էր, շատանում էր: Դէ, ինքը ջահիլ տղայ, կուիւ չէ տեսէ, անփորձուիլ մարդ: Օրը տարաժամնեց, իրիկուան մթանը ձինը քշեց ու էկաւ բէադանի տակին կայնաւ, «Քեռի-Թորոս, ասաւ, մինդ եկէք ըստեղ կայնէք, ես իշկեմ ձեզի, որ իմ սիրտն է ուրախանայ, ես կը- ուիմ, դուշմանի ջուղաբը տամ»:

«ՈՌդի, ասաւ, թարզը արա էդ բանից, թօ էս դանջլով առ- նի էթայց:

«Չիլի, Քեռի-Թորոս, ասաւ, քանի որ ես սաղ եմ, չեմ թողնի դուշմանն էս քաղաքը մնի: Աս աւ, բա մեր ցեղից սկի հօրօխպէր, ախսպէր միայն, որ կայ ընձի օգնութուն անի»:

Ասաւ. «ՈՌդի, քեզ մէկ հօրօխպէր ունիս, Խլսան անունաւոր. կնացէ Ծովասար ճգնութուն ա անըն էս քառասուն տարի»:

Տղէն ասաւ. «Ճամբէն նրն ա»:

Թոէ. «Էդ է, էն էրևող սարն ա, քշէ դնա»:

Հուքի քշեր էր, քշերը կուիւ չեն անի, պրտի հանդստանան առա օոր ըլլեն նոր կուիւ անեն, տղէն ձինը քշեց դըբայ հօրօխ- պէրը ու կնաց:

Էլի Խխանն էրազին տեսաւ, որ յաշխարք լուս ու արև էր, Սասուն՝ մութին ու խաւար: Աէօքարին⁵⁾ ասաւ, «Տղայ, դնա տես ձինն իր մըսըրքի տակը քանդում ա»:

Տղէն կնաց տեսաւ, որ ձինը էնպէստ ա մըսըրքի տակը քան- դում, որ նալներուց⁶⁾ կրակ ա ըլնում: «Աչ հայ, ասաւ, Աբլազը մե-

¹⁾ Փեղկւ²⁾ Գիւ³⁾ Կատաղեց, զայրացաւ⁴⁾ Կողմը⁵⁾ Ծառաց⁶⁾ Պայտ,

ռաւ, ես է էկեր եմ ըստեղ, էն քաֆըն էկեր ա էլի առ ու եսիր անի տանիւ: Տղայ, ասաւ, մէ վեր իշկի դուռը, զալող չը կայ»:

Տղէն իշկեց, տեսաւ, որ հեռուից մէ ձիաւոր զալում ա. Էկաւ ասաւ, թէ. «Վալլահ, հեռուանց մէ ձիաւոր զալում ա»:

Ասաւ. «Արի ընկի իմ թւերու տակ, ընձի հանէ դուս», (Տերա- ցեր էր, ոյժից ընկեր էր).

Չըմ ըտոնց ըլլելը տղէն էկաւ զաղի¹⁾ դուռ: Խշկեց Խշանը, տեսաւ, որ էսի իրա ախսպօր ձինն է: Մկսեց լալով հարցմանը անել (ողբ ա անըմ). «Ձին Աբլազին ա, դուն Աբլազը չես: Քօնն. Աբլազին ա, դուն Աբլազը չես. բէանէավարին Աբլազինն ա, դուն Աբլազը չես: թուրն Աբլազինն ա, դուն Աբլազը չես. կիւրզը Աբլազինն ա, դուն Աբլազը չես»:

Սկսում ա տղէն, թէ. «Ձինն Աբլազինն ա, ես Աբլազը չեմ քօղն Աբլազինն ա, ես Աբլազը չեմ. բէանէավարին Աբլազինն ա, ես Աբլազը չեմ, թուրն Աբլազինն ա, ես Աբլազը չեմ, զիւրզն Աբլազինն ա, ես Աբլազը չեմ: Ես Աբլազի Դառնիկ—Օրբիին եմ»:

Յիմանում ա որ աղաօր տղէն ա: Լալով տղին ձիուց վեր ա պերում ու տանում զաղի մէջ: Հաեղ տղին հարցմանը է անըմ, թէ. «Ընչի հըմար ես էկէ»:

«Հօրօխպէր, գուշմանն էկէ դուռն առեր ա. Էկեր եմ քեզի հաւար եմ անում, որ կաս ընձի օգնութիւն անես»:

«ՈՌդի, ասում ա, ընձնից քեզի օգնութիւն չիլի, էս քառա- սուն տարի ա իմ ձեռքս սուր ու թուր չեմ առէ, Աստըծու խէտ էլ էնպէս պայման իմ արէ, որ էլ ըստուց ետ էլ չառնեմ, քանի որ չեմ մահացէ»:

Տեսնում ա որ հօրօխպէրից օգնութիւն չը կայ: Ճորերը հանում են քնում էդ էրի մըմին:

Յառաւառուը որ քնից վէր են կէնում, ասում է. «Տղայ, դնա բող ձին քաշէ, թող տղէն հեծնի էթայց. կարմիր ձին (տղի ձին) նիշացեր ա»:

Էլիրմ ա բող ձին թամքում, սարքում և քաշըմ դուս:

Տղէն ըլլում հօրօխպօր ձեռը համբուրում, հօրօխպէրն է օրհ- նում, տղէն է հեծնում ձին: «Գնա, որդի, Աստուած քո խնտ ըլլի, զօչալ իլ, դուշմանից մ', վախեցի, քանի որ սաղ ես կուիւ կանես, մինչեւ իրիկուն սուր ու թուր կը պանցնես, զօշունի մըշին չես մնայ, քնուկ տեղը յանկարծ քեզի կը պունէն խաբերացութենով. որ արեւ կը մնի՛ ձինդ կը քշես կըլլես մի սարի զլիսի, սաքինադ կանես²⁾, օյազ

¹⁾ Զաղաց նշանակում է այց, ճգնարանն է) Ալ հանգստանաս,

կրես, չես քնի, չունքի ձիուդ իզը¹⁾ կ'բռնեն կ'կան, քնած տեղդ քեզի
նետ ու անեղով կտան»:

Տղէն ձինը քշեց ըտուց: Քիչ էրիցը հեռացաւ, ասաւ. «Իմ ձին
լաւ էր, չս զօլայի²⁾ ա, սաքի թէ ինձ օգնութուն արաւ», Բարկա-
նալով ձիուն մէ զանգու տուեց: Ձինը էնպէստ հաւալամիշ էլաւ, որ
իր մտքովն ասաւ տանեմ Սև ծովի, Սպլիտակ ծովի արանքը քցեմ³⁾:
Տղէն տեսաւ, որ էս ձին հաւալամիշ էլաւ, պըտի տանի սարից ձորից
զցէ սըպանէ: Ձրուն էրկու անկըջի արանքին մէ իւմրուդ տուեց⁴⁾:
Ձինն Աստղծու հրամանքով լէզու էլաւ ասաւ. «Տըղայ, գնա զուր-
բան էզի էն իւմբուղին. Քէֆը զլիսից թափաւ, թէ չէ քեզի Սև
ծովի, Սիստակ ծովի արանքը կը քցի, թէ քո ձիու նման օխտը ձի
իմ գանաղը չլլիի»:

Սսաւ. «Բօք ձի, զլիսիդ արեիդ մեռնեմ. ես չխմացաց որ էդ
հունարը քեզի ունիր. եթէ չխմանի՝ էն զանգուն քեզի չի տայ:
Դէ քշա, ասաւ, Աստղծու հրամանքովն ա. թէ դու հարուր մարդ սը-
պանես, ես հագարը կը սըպանեմ բերնով, ոտներով»:

Տղէն քշեց կնաց զօշունի աթազին⁵⁾ կացնաւ: Ակսեց ըտեղ
«Օրինեալ բարերարն» ասկի. «Օրինեալ բարերար, կամքն օրհնեալ, էն
Արարողին, դանչենք-սարերու սրբեր, ձորերու կոչս Ապր-Աստուածա-
նին, դու օգնական, պահապան ըլես էս Դատնիկ-Որբիկին»: Էնկաւ-
ծին, դու զօշունի մէջ: Սկսեց զօշունը ջարդիլ Չումի լրիկուն որն էր ինքը
սրով թրով, զըրգով, նետով, անեղով ջարդում էր, էրկու էնքան էլ
ձինն իր ոտներովն, իր պերնովը սըպանում էր: Ըրեւ որ մտաւ, տղէն
քշեց իր ձինը կնաց մէկ սարի կիսի իջաւ: Ձինը թողեց արածալի,
քշեց իր ձինը կնաց մէկ սարի կիսի իջաւ: Տղէն թողեց արածալի,

Բաղդատայ խալիքէն հրամացեց իր զօշունի մարդիկին. «Այ
գիտի, ասաւ, էդ տղէն խամ տղայ է, էդ նեղացեր ա, հըմի որտեղ
իջեր ա՝ պառկէ քներ ա: Էտու ձիու իզը պանէք կնացէք. ըտու
ձիու գոնաղները զութանի նման քանդած կըլի: Ինչ մարդ, ասաւ,
որ ընդու սպանէ, զլօփու ինձ պերի, ասաւ, անունն իմը ըլի, երկիրն
իրը ըլի»:

Իզը պանին ու կնացին: Կնացին տեսան, որ տղէն բէանէա-
վարին զլիսին քաշէ քներ ա: Սկսին որ տղին նետ ու անեղով տան,
վարին զլիսին քաշէ քներ ա: Տղէն նեղացուկ, ջարդուկ՝ քնի մէջ խորբար չե-
չորս բոլորն առան: Տղէն նեղացուկ, ջարդուկ՝ քնի մէջ խորբար չե-
պաւ: Բօք ձին ֆըռոացնում ա չորս բոլոր, ամէն դէանին⁶⁾ մի հա-

¹⁾ Հետք: ²⁾ Վատ: ³⁾ Պատմողը բացատրեց, որ Ստանբուլի ծովն է, ագ-
իով, որի ջրի մի կողմը սպիտակ է, մյուս կողմը՝ սև: ⁴⁾ Բուռնցքով զար-
եց: ⁵⁾ Մէկ ծայրին: ⁶⁾ Ասդամ:

ըուր ջան ջարդում, գալում տղի վրէն կայնում, որ նետ ու անեղով
իը տան տղին:

Իշխանի նէօքարը կնաց տեսաւ, որ կարմիր ձինը մըսրքի տակին
քանդում ա: Էկտ ասաւ. «Խանիթայ. կարմիր ձինը էնպէստ ա մըսրք-
քի տակին քանդում, հըմի չըրը մէր զլիսին կիջացնի»:

Սսաւ. «Վայ, վայ, տղին նեղութենի մըլի ա. եա իմ քներ ա,
ինչ ա, ձինը թամբէ կնա դուս»:

Ձինը թամբէց. քաշաւ:

Ասեց. «Արի, իմ ձեռից պանէ տար հեծըցրու ձին»:

Հեծաւ ձին, զանչեց լրա Աստուածն, ընկաւ ճամբաց: Ձինը
քշեց, տեսաւ, որ ճամբի մէջ մէ բարդու էրկար ծառ կաց: Ասաւ,
«Մէ փորձեմ, ձինն էրկու դլօս քշեմ, ձինը տաքացնեմ, զամ, ասաւ,
էն ժանիկի խետ էս ծառը խըտում քօքըսան անեմ, թէ կարացի՝
կէթսոմ տղի հսւարին. թէ ըլ կարացի՝ չեմ էթաց: Ձինը քշեց ու
թափի խետ ծառը քօքըսան արաւ: Ծառը դրից ուսին ու ձինը քը-
շեց զնաց: Կնաց տեսաւ, որ զօշունը իրար քամակի ըլլում են զը-
բայ սարը: Հարցրեց էդ զօշունի մարդիկին, թէ. «Ար էք ըտենց ըլ-

թէ. «Բաղդատայ խալիքի դուշմանը փախել ա էս սարի զլօխը,
ըլլենք բայքի սըպանենք» (ըլլոնք էլ չեն ճանանչում, հէնց են իմա-
նում զօշունի մարդ ա), Ձինը քշեց կնաց հասաւ Գառնիկ Որբիկին:
Տեսաւ որ տղէն քներ ա, բօզ ձինը արուն—քրտնքի մըլի ա, զօ-
շունն էլի ժողուէ չորս բոլորը առեր ա, ձինը փրուռում է չորս բո-
լորից մի 300—400 սըպանում ա, զալում տղի վրէն կայնում. որ
էլի դալումին՝ ձինն է եդ ջարդում ա զօշումին, տղէն է քներ ա:
Եդ զօշունի մարդիկի մըլիցը ծառը պարզեց, տղին բրթեց, Տղէն օ-
շանմիշ էլաւ¹⁾ տեսաւ, որ զօշունը չորս բոլորը առեր ա:

Տղէն էլաւ հեծաւ ձինը: Ձինը քշեց զարբով զօշունի մըլից
էլաւ զրադ: Հօրօսպէրն էկաւ տղի կուշտ: Ասաւ «Տըղայ, ասաւ, էս
քառասուն տարի ա ես սուր թուր չեմ բանցրէ, էլ չեմ բանցնի,
Աստծուն ըլստափրութիւն եմ արէ: ես էս ծառով կը ժողում կը պե-
րէմ, որ թուրով կտրա. հնձի. ես կը ծորեմ, որ ծոր բլիքէ: Վերշա-
պէստ էդ զօշունը էնպէստ ջարդեցին, որ խարբազերը կտրեցին,
Բաղդատայ խալիքին էլ սաղ պանեցին: «Արդի, ասաւ, արի դու էս
մարդի զլօխը կտրէ, վերջացրու, ըստուց քէ խաթաց կը կաց»:

«Ճէ, ասաւ, կ'տանեմ իմ մօրը զուլուղ կանի, ցան կը պերէ,
չուր կը պերէ, մոխիր կը թափի, - զուլուղ կանէ»: Հօրօսպօրը մնաս—
պարով արաւ ու կնաց իր ճգնութենին, չէրի մէջը:

¹⁾ Զարթնեց.

Տղէն առաւ էկաւ Բաղդատայ խալլիֆին:
 Քեռի-Թորոսն էկաւ, ուրախացաւ, փաթթաւ տղի վիզը, էրես-
 ները պաշեց, թէ. «Ո'րդի, արի դու ըստու կլօխն է կտրէ»:
 «Չէ, ասաւ, ես պերեր եմ որ տանեմ իմ մօրը զուլուղ անէ»:
 Ասաւ. «Ո'րդի, ըդուց քէ վնաս կրգայ»:
 «Էս ինչ ա, որ ըստուց վնաս ըլի»:
 «Դէ, դու գինաս, նրդի. քո մեղքը քո վիզն ըլի»:
 Տարաւ Բաղդատայ խալլիֆին զրեց մօր կուշաբ:
 Մնաց մէկ ժամանակ: Բաղդատայ խալլիֆին ինչպէս մարդ ու
 կնիկ ըլէին. (տղէն չէր հասկանում): Համա ինչ վախա տղէն իրանց
 տունը գնալու էր ըլում՝ Քեռի-Թորոսը ետև ից պահապան էր գնում,
 որ ըլ սրպաննեն: Տեսաւ, որ մէրը տրկտըլկում է, նիաթը կախ է¹⁾):
 Թէ. «Մէրիկ, ընչի՞ ես ըտէնց տխուր»:
 Ասաւ. «Ինչ անեմ, որդի, ասաւ. քանի ըղործածիկ հէրդ սաղ
 էր՝ սաղբանջ ինք խալլում, ուրախանում ինք. հըմի սաղբանջ խա-
 ղող չը կայ, ընկեր ա միտս, ընդուր հըմար քէ՛փս խարաբ ա»:
 Ասաւ. «Մէրիկ, ես էլ սաղբանջ կը խաղանք, արի խաղանք»:
 Ակսին սաղբանջ խաղալ: Հա տղէն մօրը տարաւ. «Վայ, Պառ-
 նիկ-Արքիկ, ասաւ, դու ընձի տանըմ ես, իմ քէ՛փս դհա ա խարաբ
 ընում. ես քեզի տանեմ, որ ծինաղամ»:
 Թողլ թողեց իրան, մէրը տարաւ. Ասաւ. «Դէ ծընաղա»:
 Ասում ա. «Խ'նչ ծընաղամ. պէ ոտը ձեռդ կապեմ, որվիշդ ծենաղամ»:
 Ասաւ. «Հրէն ա ճողանը²⁾, պէ՛ կապի»:
 Ասաւ. «Ճողանը քեզի կը դիմանայ»:
 Ասաւ. «Ճողանի պութանի պը սանից, ես կապէ սանից, վը
 քեր գութանի պընատով³⁾ կապէ սանից, ես կախտուեմ, վը
 թէս ծընաղայ»:
 Էն պահապաններն էլ թագուն թամաշայ են անում, տեսնեն
 տղի կլսին ինչ օցին կը խաղան:

Պերին տղին պընատով լաւ փաթթին սընից: Որ փաթթեցին
 սընան՝ ասաւ. «Բաղդատայ խալլիֆայ, դէ արի թուրը քաշի տղի
 կլօխը կտրէ»: Որ ըտէնց ասաւ՝ տղէն թափ տըւաւ իրեն, պընատէն
 կտրաւ ու տղէն յարձըկուաւ:

«Եա, մէրիկ, մէագեար դու ընձի սպանելու իր պերի»:
 «Չէ, որդի, իս զաստու դէնց արի. քու ուժն ի փորձում: Բա
 Պառնիկ-Արքիկ, դու ընչնի կախտուես»:
 «Պերէք իմ նետ ու անեղի լարը իմ ձեռիս բըթները ետեանց
 կապէք, ես կախտուեմ»:

¹⁾ Պէմքը կախ է, ունքերը ժողոված: ²⁾ Կաստ պարանս: ³⁾ Ջղթար:

Պերին Բաղդատայ խալլիֆի հետ պինդ կապեցին տղի բըթները
 քամակից:

Ասաւ. «Դէ, Բաղդատայ խալլիֆայ, թուրը քաշի, սըպանի»:

Տղէն փորձեց, չկարցաւ որ լարը կտրէր: Էն ժամանակ Բաղ-
 դատայ խալլիֆէն պերում էր, տղէն ճըշում էր, բանձրանում, էլ
 թուրը չէր գիպնում տղին, տղին փախնում էր:

Կդ սպահանները հաւարը քցին Քեռի-Թորոսին, թէ. «Սրի,
 որ տղին կը սըպանեն հրմի»:

Էկան հասան, տղին ըգոնց ձեռնից առան. առան տրղի բըթ-
 ները յարձկեցին: Ասաւ. «Ո'րդի, էն օրը որ ես բէ ասումի թէ
 ըտուր կլօխ կտրէ, ըտուց քեզ փորձանք կը գայ»: Տղի բըթները որ
 յարձկեց՝ տղէն թուրը քաշեց Բաղդատայ խալլիֆի զլօխը կտրեց:
 Զամդակլ տարաւ ջոկ տեղ փորեց, միայն գլօխը ցիրանց շէմքէ տըկին
 փորեց:

Մնաց մէ ութ - ին - տաս օր արանքն ընցաւ. Քեռի-Թորոսն
 էթում էր ժամ. տեսաւ որ մէ լացի ձէն ա կալըմ: Անաց տեսաւ
 օթը վի փանջարից իշկեց, որ Պառնիկ-Արքիկի մէրը Բաղդատայ խա-
 լլիֆի կլօխը հաներ ա, մօրուքը խինաց ա դրէ, յաճքերը դեղ ա դրէ,
 օրնաւր զարդարեր ա ու դրէ փէշը, նստէ գովասանք ա անըմ.—
 «Էն սուրը որ քաշին քեզի՝ քաշէին Պառնիկ-Արքիկին, էն թուրը,
 որ քէ տուեցին՝ տին Պառնիկ-Արքիկին, էն գերեզմանն ինչ քէ կապէ-
 ցին, կապէին Պառնիկ-Արքիկին»: Քեռի-Թորոսը այդ պաները խելով
 էլ ժան չը կնաց՝ ետ զարձաւ զնաց Պառնիկ-Արքիկին ասաւ. «Պառ-
 նիկ-Արքիկ, արի մի տես մէրդ ինչ լաւ զովասանք ա անըմ: Պառնիկ-
 Արքիկն ու Քեռի-Թորոսն էկան իրար խետ, էկան տեսան, որ ինչպէս
 որ Քեռի-Թորոսը յսեց, էնսպէս էլ, էդ լսեց.

«Էն սուրը, որ քաշին քեզի՝ քաշէին Պառնիկ-Արքիկին. էն
 թուրը, որ քէ տուեցին՝ տին Պառնիկ-Արքիկին. էն գերեզմանն ինչ
 քէ կապէցին՝ կապէին Պառնիկ-Արքիկին»:

Որ ներս մտան՝ կլօխը կոխեց փէշի տակը: Որ տղէն մտաւ,
 ասաւ.

«Ա'դէ, մի վէ, կաց տեղիցդ մի ջուր տու խմեմ»:

Որ էլաւ՝ Բաղդատայ խալլիֆի գլօխն ընկաւ ցածը թբըկալով:
 «Ա'դէ, ասաւ, էդ ինչ ա, որ փէշիցդ վիր ընկաւ»:

Ասաւ. «Սկի, որդի, էն շան կլօխն էր, կատուըները հաներ են
 խողի մըշից, ես ուղի տաների որ խորի խողի մըշի, ամօթու դրի փէ-
 շիս տակը, թօ չը տեսնեն շան կլօխիր»:

Ասաւ. «Եա էն ինչ զովասանք իր անըմ, թէ էն սուրը, էն
 թուրը... Քաշեց թուրն ու մօր կլօխը կտրեց: Տարան թաղեցին»:

ձի: Ար մտաւ ըսեղ՝ էդ ձինը լեզու առաւ խօսաց, թէ. «Սաստնայ ծուռ, դու էկար ընձի զբանք, նստուած ընձի քեզիկ էր զբանաթարել. մէկ օրուայ մըչի ուղենամ աշխարհ կը քանողեմ, ուղենամ կը շիկեմ (բառու տէրը մեռեր էր, էդ ձին ծալից էր հանել) ևս Քունկէ-Ջալաղլին եմ, իմ սիրոջ թուրն էլ հւտու է, սրախոյ կախուկ է, կէ ծկրտան թուրը»:

Քունկէ-Ջալաղլին գուս քաշեց, թուրն էլ կապեց վրբէն, հեծաւ ձինը, մէ գուս կար, պաց արտ էդ դուռը ու քաշեց էլաւ տղերքու կուշտ. Քաղոխայ նախըրջին էկար, թէ... Ասուուած քո տունը չաւրի. մէ քառասուն ձիաւոր էկան նախըրի կէսը կիսին տարան»:

«Այ տղաց, դըւնըրը տարան»:

Թէ. «Էսպէս»:

Քունկէ-Ջալաղլին քշեց ու ըգոնց քամակիցը զնաց, ըդոնց իրը պունց զնաց ու տեսաւ, մտած են մէ զաղը. զաղի գուանը կայնաւ ու ձին տուեց. «Դուս էկէր, ինչ մարդիկ էք»: Էդ մարդէկի մէ կը տուս էկաւ տեսաւ, որ հասաց մէ ջահկ տղաց ձիու վրայ նստած զաղի դուռը կորէ կայնէ: Ես դարձաւ զնաց իրանց հարամբաշուն¹⁾ ասաց, թէ. «Մյափէս մի երիտասարդ տղաց ձիու վրայ նստէ զաղի դուռը պոնէ, թէ իմ տաւարը տուէք»:

Ասաւ. «Էլք գուս տեսէք վնի ա, չէք հանաչում»: Էն միւսն էլ լան տեսան, որ Ասունայ ծուռ Քաւիթն ա, ւկան իրանց մեծին ասին թէ Սասունայ ծուռ Քաւիթն ա»:

Ասաւ. «Գնայէք, հստըծու սիրուն. բարկութիւնը կը բոնաց մեր քառասունին կը սըշպանի. ըտոնցը տուածուրիկ է²⁾», միննաթ արք պերէք բատեղ, որ եւրաց էթանէք»: (Տաւարի մէ կը մորթեր են, ՅՇ-ը սաղ էր) Պիննաթ արին, ձուց վէ պերեցին, առան կնացին զաղին Աղացեցին պաղատեցին թէ Ասծու սիրուն, մէ երինչը մորթեր ենք, գինը տասը մանէթ ա, առ հարուր մանէթ, մէդք ենք»: Պերէցին հարուր մանէթ փող տուեցին, էն սաղ տաւարներն է ժողուեց առաւ զնաց: Տարաւ խսոնց ուր նախըրին, նախիրն էլ քշեց տարաւ կեղը Ձէն տուեց. «Քեռի-Թորոս, տար ամեն մարդի տաւարը տուր իրեն, էլ ես տաւար չեմ պահում, նախիր չեմ էթայ»:

Էկան ամեն մարդ իրանց տաւարը տարան. էն մէ տաւարի տէրն է ասաւ իմ մէ տաւարը ըր կաց. «ըդու տաւար կորցրեր հմ. զին գնին, ինչ ա տամ»: Դին դրին 15 մանէթ, հանեց 20 մանէթ տուեց: Էկան ուրենց ուրիշ նախըրի բռնին:

¹⁾ Աւազակապէտ: ²⁾ Քրուած է:

Դաւիթը սկսեց Քունկէ-Ջալաղլը հեծնել ու աւ¹⁾ ու դուշ էթալ: Աւ ու դուշ էր էթում, Ասունց օրը կէթէր սարերը կը պտուէր, իրիկունը կը կար տուն: Ամա, արի որ, էն ժամանակ Դաւնիկ-Արբիկը որ Բաղդատաց խալիֆին սրբանեց ընտու թափաւորութիւնը վերջացրեց, Մըսըր-Մելիք կար, Մսրաց քաղբին էր նստում. Էդ Մսրա Մելիքը որ նում ա թէ Բաղդատաց խալիֆը վերջացեր է, Դաւնիկ-Արբիկն է մեռեր է, Էկաւ Ծովասար տիրեց: Ամա Դաւիթը որ էթում էր աւ ու դուշ անում, կալու ժամանակ մէ որբ պառաւի կորեկի արտ կար. Դաւիթի ճանապարհի վըրէն էր. Ասծու իրան օրը կալում Քունկէ-Ջալաղլին խրկում էր արտի մէջով, զալում էր տուն: Պատաւը մէկ օր գնաց տեսաւ որ Դաւիթը կորեկն աւիրէ թողեր ա: Բսաւ. «Դաւիթ, գու քու ծուրապին չը հասնիս. Ես մի որբ ողլուշաղ եմ, երեք-չորս էրեխաց ունին, իս ումուզը էդ արտ կորեկն է. գու տէնց որ զօշաղ տղաց իս, Սասունայ սարը, էկէ Մսրա-Մելիքը զավթեր է. Քեզնից առաջ ձեր ազգի փահկւանները էդ Ծովասար տիրեր են, էթում ենք եալաղ. ընչի չես էթում առնիս. զօշաղ տղաց ես՝ զնաց Ծովասար, առ Մսրա-Մելիքի ձեռնից»: Ճանին դարտ էլաւ պառաւի խօսքերը Դաւիթին: Անչեց իրիկունը Քեռի-Թորոսին հարցմունք արաւ Դաւիթը էդ բաները: Տեսաւ որ պառուի խօսքերն ուզիդ է: «Քեռի-Թորոս, ասաւ, առաւտունը պըտի ես էթամ Ծովասար»:

«Արդի, կը տան քէ սըպանին, զործ չ'ունիս»:

«Չէ, ասաւ, ես պըտի էթամ»:

Քեռի-Թորոս տեսաւ, որ տղէն խելքովցեր է, էս ընստնցից զօշաղ կ'ըլի, Ծովասար կառնի:

Ըուաւուր ձինը հեծաւ ու զնաց գբայ Ծովասար: Գնաց տեսաւ, որ Մսրայ էլլ էնպէստ ա չաղը չաղը սէջունիշ արէ²⁾, որ էլ չեմ կարայ ասի: Զինը քշեց զնաց մէ հարուստ մարդի գուանը իջաւ:

Էկան ձինը քաշին տարան կապեցին: Թէ. «Ճեղի ինչ իրաւունք կայ, որ էկէ ըստէ չաղը էք դրէ»:

Տեսան որ Սասման ծոերուց է, մէկը էլլ բամ ա էկէ³⁾:

Ասին, «Ղուրբան արեւոդ, քո անունն ինչ ա, տու նր գեղցն ես»:

Թէ. «Ես Սասունցի իմ, իմ անունն է Դաւիթ ա. Էս մեր պապական տեղն ա, ձեզի ինչ իրաւունք ունիք, որ գաք ըստէ իշնէք»:

Էդ մարդիկը տեսան, որ իրանց ըտէ թագաւոր չը կաց, զօշուն չը կաց. թագաւորն ու զօշունը Մըսըր ա: Էդ մարդի տանը, որ Դաւիթը վեր էր էկէ ըստու մի լաւ ախչիկ ունէր, Խանդուր-Խանում անունաւոր: Էդ ախչիկը Մըսըր-Մելիքին նշան դրուած ա ըլնում:

¹⁾ Արտ: ²⁾ Վըրան տուել: ³⁾ Լոյս աշխարհ է եկել:

Խորհուրդ արեցին, թէ էս ալսչիլլ տալիս ենք քէ. խաբենք, բայցի ճամփու քցենք»:

Կիան էդ մարդկին ասեցին, թէ. «Պատելթ, կլսուդ արևուգ զուրբան, էսի Մսրա-Մելիքի տեղն ա, մենք է ընտուր ժողովուրդն ենք. եթէ մենք լիմանենք քունն է՝ չեք կայ. էս մի անդամ մեզի ներողութիւն կանես. մէկ էլ որ կանք՝ մեր էլը ջարդէ. էս աղջիկն է կ'տանք քեզի, մէ ամիս էլ մեզի ժամանակ կը տաս, ախշկաց ձեռ ու ոտը կը տեսնենք, կը կաս քո հալսուն կ'տանես. մենք էլ կը քոչենք, էլ չենք կպա»:

Պարեցին նշանադրութիւն արեցին: Ելաւ Պատիթը կր ձին ու թողից էկաւ: Քեսախ-Թոռոսին ասաւ, թէ. «Վալլահ, գնացեր իմ Ծովասար, Մսրայ էլի մէջ մի հարուստ մարդ կար, ընդրա ալսչիլը նշանադրութիւն իմ արէ. ընտոնք էլ խօսք ին տուած, որ էս մէ անդամն ա. էլ չկան Ծովասար»:

Էկամունքը պատճենաբառ է առաջ գալու համար:

Քերի-Թորոսն ասաւ. «Ո՞րդի, ես չափի քեզի, թէ խաթաց կը բարձան էկան Սասուն։ Առաջ ոտոնվագիդ, խաբած ին»։ Ես դարձան էկան Սասուն։

Այսպէս կամ առաջին արեցին իլլաջ է հլաւ,
Մէրը, Քեռի-Թող ոսը, ինչքան պաղատանք արեցին իլլաջ է հլաւ,
Թէ ես առաջի Էթամ:

Հեծանիք կամ պահանջեց իր Աստուածը ու գնաց:

Այս ալիւմով է՝
Այս տըզայ, դու ինչ մարդ ես. զուշն իրա զանագովը ¹⁾ օճռ
իր պորտովը բատոնքը չի երևայ. դու ինչպէստ էկար ըստեղ. դու
ինչ մարդ ես»:

Թէ. «Ես Ասունցի Դաւիթն իմ»

Ըստեղ նստան, խօսեցին իրար այֆալ·դըսայ¹⁾ արեցին: Դաւկիթն ասաւ, թէ. «Դու հւր ես էմբրմ»:

Թոէ, Մարա-Մելիքի մըջն մի հատ խանդութ-Խաթուն անունաւոր ախշիկն իմ նշանածն ա, լսաբեր են առէ կնացէ. Էթը են որ ճարեմ պերեմ»:

«Փուր, ասաւ, դու ինչքան ուժ- ու զբւաթ- ունիս, որ էթը լմ ես
Մսրա.Մելիքի խողի ճըլից ախչիկ պերես»:

Ասաւ. «Ի՞մում եմ հրմի. թէ Աստուած յաջողեր է՝ կը պերիմ, թէ չէ՝ կը սրպանուեմ» (Թու մի ասա էդ ախչիկը ի՞նչ ախչիկ է. ըստունք էլ Բաղդատայ խալբի էլիցն են: Աբլաղ թագաւորի ժամանակին, որ ըտոնք կալում են Ծովասար լազաղ՝ Աբլաղը ըտու մօր խետ նստում էր կացնում, իսկ էդ ախչիկը Աբլաղ թագաւորիցն էր: Չունքի որ Աբլաղի սերունդիցն էր, Աստծու գութը ընկեր էր ընտուր սիրտը):

Թաւիթ՝ հարցրեց. «Բա դու ընչլի ես էկէ, առանձին էս օթախը շիկէ մըջին նստէ»:

«Ես, ասում է Կապուտկողայ եմ, մէ իշխան մարդի ախչիկ եմ. իմ հայրս էլ կոքապաշտ ա, ընձի ուզում ա տայ կրապաշտի թագաւորի տղին, ես չեմ ուզում կրապաշտութիւն անելլ, ես ուզում եմ քը-րիստոնեայ դառնալ և Ծատուած ճանաչել, ընդու հըմար էլ ես էկեր եմ էս օթախի մէջը. էնքան ուժ ունիմ ընչի, որ չեն կարողանում ընձի ախտին, որ տանեն»:

Դաւիթն ասաւ. «Քան մի առաւտունո մեր ուժո փռոքչիք»:

Ասաւ. «Ես էդ գործի հրապարակ եմ»

Եփօր հաց կերան, պառկան քնան, առաւտունը որ լուսը
բացուաւ՝ արաբի դեստ²⁾ ունէր ախչկանը, որ հագնում էր՝ ըլլում
էր տղամարդի նման: Ախչին իրա ձինը քաշեց դուս էդ արաբի
գիստը հաղաւ. իր գուրզ, նետ ու անեղը վէ կալաւ, իր ձինը հեծաւ ու
մէցնին կայնաւ: Ետով, Դաւիթն էլ իր ձինը հեծաւ, իրա ասպարն
վէ կալաւ, մինչև իրիկուն իրար զիւզ, անեղ, նետ զցեցին, մէկ մէկու
չկարցան աղթեր ին, էկան ձիուց իջան: Դաւիթ էնպէստ հասկը-
ցաւ, թէ իրաւց ջրնսիզն ա, ազնանից ջինս ա:

Քնան, առաւտուն էլան. մինչև ի ճաշ կրուան, էլի ըս կարցան մէկ-մէկու աղթեր ին:

Պատիթն ասաւ. «Այսինք, էսենց չիլի, իջի ձիանքը թողնենք, զիւլաշ կպնենք, ձիանքը մեռ ինձ»:

1) *Phlebotomy:*

¹⁾ Հարց ու վիճակ արևինք 2) Զանգանը

Եփօր գիւլաշ կպան, շատ չարչարուեցին, Դաւիթն ախչկան տուեց դիտին.

«Դէ, ասաւ, տղաց. ես էնպէստ ի արէ իմ ջանին, որ պէտք ես քրիստոնէ առեր ի. մէկ էլ, ինչ մարդ որ ախտէր՝ ընդուր առիր ի. քանի քանի փահլուաններու խետ փորձուեր ի՝ ընձի ախտող չէր էլէ: Հըմի, որ ինքդ քրիստոնեաց, ընձի էլ ախտեցիր, ես պտի ժողի առնլմ»:

Դաւիթն ասաւ. «Զէ, ընձի մուրազ ունի մ, մինչի իմ մուրազը ըլ կատարիմ, քեզի չեմ առնի»:

Ասաւ. «Քանըրմ, որ մուրազն Խանդութ-Խաթունն ա, ես արարի գիստը հագնիմ, մինս հեծնիմ քո խիտ գամ էթանք պերինք, ինձ էլ խետն առ գնա, (չունքի էն ժամանակը Մովսէսի ժամանակն էր, որ քրիստոնեաց էր և իրաւունք կար երեք-չորս կնիկ առնել)»:

Ասաւ. «Զէ. ես չեմ ընդունի որ գաս. ժամանակն կ'ասես թէ ես կնացի պերեցի. կնամ Խանդութ-Խաթունին պերեմ, կամ քեզի էլ իմ խիտ տանիմ»:

Ելսչին ասում ա. «Չունքի որ էդպէս՝ էս օր էլ մի կնա. էզուց էն թաղաւորը պէտք է դօշուն կապի կաց, որ ընձի զօռով առնի էթաց, ես գինամ, որ դու սկի դօշուն արած չ'ունիս, ջահիլիս տես մր ես էն դօշունի զլօխը ինչ օյին կը խանեմ»:

Քնան առաւոտը վէ կացան: Կռապաշտի դօշունը էնպէստ էր էդ ախչկայ ամարաթի բոլորը փակէ, որ քարին, թփին հէսաբ կաց, դօշունին չը կաց: Ախչ իկն էլաւ իր արարի գեստը հագաւ, իր ձինը հեծաւ:

Դաւիթն ասաւ. «Խսքան դօշունը տու չես կարաց ջարդի, թող ես էլ իմ ձինը հեծնիմ»:

Ասաւ, թէ տու կանի թամաշաց արա, տես ես դօշունի կլօխն

թի օլին կը հանիմ:

Մինչի ի հաշ ախչիկը կրիւ արաս. Լո դօշունը էնպէստ կոտորեց, էնպէստ սըպանեց, որ թաղաւորը մէ չորս ձիաւորով անջախս արծաւ:

Ասաւ. «Դաւիթ, տեսնում ես Լո դօշունի զլօխն ինչ օյին հափախսւ պրծաւ:

Դաւիթն իր ձինը քշեց դուս, հեծաւ իր ձինը ախչիկը նորից մէկը իր պայմանը հաստատեց, թէ. «Տես, իմ ձեռնիցը դու վնաս կը քաշիս, եթէ դառնալուս ընձի չ'տանիս»:

Էլաւ իր ձինը ու քշեց կնաց: Քնաց, մէկ օր, էրկու օր, զնաց ամեն մարդոց հարցնում էր, թէ, Կլար որն ա: Նշանց տուեցին, թէ ամեն մարդոց հարցնում էր, թէ, Կլար որն ա: Նշանց տուեցին, թէ էլի Դավիթ էլ Կնաց տեսաւ, որ մէ դիզգեահ տեղ էլ մէ զութան

պանում է. ինքն էլ ձին էլ էր սոված. «Կաւ, ասաւ, էսի զութան ա, զութան օլանը Ասծու օրհն ած ա. էթամ, ըստեղ հաց կըլի, կուտեմ միքիչ, ձինս էլ կարածայ, հէսայ Ղաթը, կ'էլլեմ կեթամ: «Կնաց էդ զութանաւորին բարե տուեց, էդ մարդիկն էլ ուր բարեն առան:

Թէ. «Ընսպէր ջան, սկի հաց հնեկիք»:

Թէ. Զիուց վեր արի, ձինդ թող արածի, դուն էլ մի քիչ հանգստացի, հըմի մեր հացը սէլով կը պերին»:

Զիուց իջաւ՝ ձինը բրաքեց ըտեղ արածայ, ասաւ. «Ե՞ց, մարդիկի, էդ գոմըշգանքը մեղք են. հնին վար արէք, շոքին խի էք ջարթում»:

Թէ. «Ակնակոս ա ըլէ, քիչ ա մնում, առնենք, նոր կը թողնք տաւարը»:

«Զէ, ասաւ, էդ անասունները մեղք են, թողէք»:

«Զէ, աղաց, Ասծու սիրուն, թող էդ թիքէն վարենք արտատէրը կնեղանաց»:

Դաւիթը զուռով թողի տուեց տաւարը: Ասաւ. «Ե՞դ զութանի պնատէն, լըները պըրծըցրէք զրաղ դրէք. «Խարզանը¹⁾ դրեց ուսին, մանկալին առաւ, դու մաճը պըռնի (ասաւ), ես հըմի կը վարեմ կը պըճնեմ»: Յինքը մենակ էդ զութանը տանըմ պերում էր. չումնի հացի կալը վարեց պըճաւ:

Հաց պերողները տեսան որ էդ մարդը մենակ զութանը դրէ ուսին վարեմ ա. զարմացան էդ մարդի ուժի վըրէն. «Ատրիճ, արի նստի հաց կէ, ասեցին»: Թիստը մարդի խորակ ին պերած, էկաւ օխտը մարդի հացը, խորակը կերսւ, էլաւ իր ձինը հեծաւ, ասաւ մընացէք պարի, ես էթրմ եմ:

Էդ մարդիկն ասեցին. «Հալալ ըլի էդ մարդի կերած-խմածը, թէ զըրաթը թէ ուտելը հալալ ա. որ ասում ին Սասուն էս թաւոր աղնանց ջընսից էս թաւոր աղամարդիկ կան՝ չենք հաւատում. աշքով տեսանք ու հաւատացինք»:

Քշից կնաց Ղաթ. Էն մարդի ախչկն ինչ ուզեր էր՝ ընդուր դուան իջաւ: Էս մարդիկը տեսան, որ էսի Դաւիթն ա, իրանց խոսք տուած մարդն ա: Դաւիթին տարան ներս: Հաց. խորակ պերեցին՝ կերաւ, խմեց: Էդ մարդը Դաւիթիցը թաքուն մէ մարդ ճանիեց Մըսրը Մէլիքի կուշոր, թէ. «Ի՞նչ ես անրմ, Դաւիթն էկէ իմ ախչիկը տանէ. հունար ունիս, տեսս»: Դաւիթն էլ սաստում ա էդ մարդին, թէ ախչկանդ ձեռը սար տեսս, որ առաւոտը պըտի էթամ: Էդ մարդը

¹⁾ Գութանի ալն երկար փայտը, որի վրաց ամբացած է լինում խոփը, և որի ծալքին ամբացնում են լուծը: Այրարատեան նահանգում կուռում է «զութանի էշ»:

Գաւըթից հինգ օր ժամանակ ուղեց որ բալքի թագաւոր դայ հասնի։ Հինգ օրը թամմաւ, Մսա. Մելիքը չէկաւ հասաւ։

Դաւիթն ասաւ. «Եղ Ել քո պայմանը. հինգ օրը թըմմաւ. դէիմ կնիկը տուշ, ես պըտի էթամ»:

Եղ մարդը չը կրցաւ իլլաջ տեսնէր։ Ելաւ ախչկայ ձեռը-ոտը տեսաւ, մի ձիու վրայ դրեց, տուաւ էդ մարդին, թէ առ կնա, էդ էլ քո կնիկը։

կլան քաղաքիցը: Որ մէկ օրուան ճամբազ զատքացն, ալսվիկն իմանուած էր, որ Մարտ-Մելիքը պըտի գայ. ասաւ «Արի իշնենք ձիանքուց. մէկ օր մենք էլ, ձիանքն էլ դինջնան, կելիինք կ'թանք»:

Եփօր ձիանքուցը իջան, Խաւիթը ձիանքոցը բրախիսց՝¹⁾ արածան, ինքն էլ զլօխը դրեց Խանդութ-Խաթունի չոքի վրէն ու քնաւ։ Քնելը շատր-քիչը Աստուած գինաց մէկ էլ օնամիշ էլաւ տեսաւ որ հը, դօշունը հասրէհաս ա²⁾։ Էլաւ ասաւ. «Խանդութ-Խանում, ըլ վախինաս, ըստոնք ինձի հըմար ին էկած, որ սրպանին, քեզի առնեն տանեն. դու առ քո ձինը, դօշունից դրազ կայնի, չը խառնուիս, վայ թէ վախինաս»։

չեծաւ Քուռակի,-Քալադին ու զանչեց իրա Աստուածը, դնաց գո-
շունի աթաքին չ կայնաւ: Սկսեց «Օրհնեալ բարերար» ասել. Օ'րհ-
նեալ Բարերար, կամքն օրհնեալ, էն Արարողին. զանչենք սարերու
սրբեր. ձորերու կոյս Մայր Ծոտուածածին օգնական պահապան ըլիս
էս Թաւրլթին»:—Քաշեց իր կէծկրտէն թուրը ու ընկաւ Մարա-Մե-
լիքի մէջը. դօշունը էնսկէս ջարդեց, որ անջախ Մարա-Մելիքը մէ հինգ
մարդով փախաւ, պրծաւ Թաւրլթի ձեռլից: Վէ կալաւ իր Խանդութ-
Խաթունն ու էկաւ: Էկաւ Սասունայ մօտլցաւ. էթող-գալոր խարար
տարաւ, թէ Թաւրլթը Խանդութ-Խաթունն առաւ սաղ-սպամաթ զա-
լում առ

Քեռի-Թորստը մէ քանի Սասունայ լաւ մարդըկեցը էլան էկան
Դաւթի դէմ: Էկան բարեւեցին Դաւթի խետ: Իր զիսի դալած Դա-
ւթ պատմեց ըտոնցը: Էկան էկան, ախչկայ ամարաթն անցան, Դա-
ւթը սկի ըլինաց ձախոսուզ⁴⁾ արբայ ախչկայ ամարաթը: Աղջկն է
զաթի Դաւթի ճամբէն պահճմ էր: Յիշչիլլ տեսաւ, որ հէսա Դաւթը
Խանդու-Խաթունն առաւ էկաւ գնաց, չը տարաւ իրան: Էդ ախ-
չիկը տեսաւ որ Դաւթը պայմանագանց էլաւ իր պայման: Եթ՝ էկաւ
ձինը հեծաւ, յառաջ-յառաջ էկաւ էդ ճապաղրի դրադ (Դաւթի
իր ձինը հեծաւ, յառաջ-յառաջ էկաւ էդ ճապաղրի դրադ): Էկաւ ախչիկը իր ձինը բրախեց: Ար Դաւթն էկաւ էդ ջուրն հընցան՝ «Դէ, ասաւ,
էդ զամշէն⁵⁾ մէջ: Որ Դաւթն էկաւ էդ ջուրն հընցան՝ «Դէ,

Քեռի.Թորոս, մէ էրկու ամիս ա չեմ լողացէ. դու առէք հարսը կնացէք, ասաւ. Ես մի բատեղ լրդանամ, կր գամ հասնէմ».

Զի՞նը բրամից ըտեղ ու մտաւ ըտեղ լողանաց: Ախչին էն դա-
մըշի մըշին նիտ ու անեղք էնպէսո զարաւուլեց, որ Դաւըթի սրտի
մըշին տաղուն պէս Դաւիթը փոռւաւ ջրի լիրեսն: Ախչիկը դամշի մը-
շիցը Դաւիթին պոնեգ դրեց դրադ:

«Անաստուած, դու բնիք բնձի անտեղոի սոաանեցիր»

სამაც «ხუ ფი խեთ պალმას არხევები, იო ღნაძები კი თანასეს» ქადაგის ტანა და მარტინ გამარჯვებული იყო.

Յինքը որ մեռաւ, կնվին էրեխտով էր, պառկաւ մէ տղայ պերեց. կնքեցին, անունո որոնին Աթեն Աթեն Աթեն.



¹⁾ Բաղ թռղեղ; ²⁾ Պօռեցել է; ³⁾ Մէկ ժայրին; ⁴⁾ Դիտմամբ; ⁵⁾ Եղեգնութ:

1) $\Psi_{t,p,p,t,p}$



ՀՀ Ազգային գրադարան



NL0313153

